

Ա. Ի Լ Ի Ե



ԺԱՄ Ը

ՔԱՐԵՒՄԱՆ Ե



087-1
հ-34



JUN 2009

584
4-33
այ

Մ. Ի. Լ. Ի. Ն.

ԺԱՄԻ ՔԱՆԻՄՆԵ

ՊԱՏՄՎԱԾԲՆԵՐ ԺԱՄԱՆԱԿԻ ՄԱՍԻՆ

Նկարները
Ն. Ա. Պ. Պ. Խ. Խ. Խ.

Պատմական Հրաժարվածութեալին
օգոստոս 1936

ՕՐԵ
ՀՅ

26 APR 2013

16258

ՄԻԶԻՆ ՅԵՎ ԲԱՐՁՐ ՏԱՐԻՔԻ ՅԵՐԵՒԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Ա Ռ Ա Ջ Ի Ն Մ Ա Ս

Պատ. Խմբագիր՝ Ա. Հ ա յ թ ա ն
Թարգմանիչ՝ Գ. Հ ա կ ո բ յ ա ն
Լեզվ. խմբ. Հ. Պ ե ս ր ո ս յ ա ն
Տեխ. նոմ. Տ. Խ ա յ վ ա ն ե յ ա ն
Մերագրիչ՝ Հ. Մ ա ն ո ւ կ յ ա ն

Պետհրատի տպարան
Կումայլիս 269, Պատվիր 1114
Հրատ. 3468, Տիրամ 3000

Հանձնած և արտադրության
15 սեպտ. 1935 թ., ստորագրը՝
Վահագրելու 17 նոյեմ-
բերի 1935 թ.




540
43

Աքաղաղն ուժգին թէին և տալիս
Ու դիմավորում որը իր յերդով
Ժուկովին ի ի, անիետանա

Ի՞՞նչ ԿԱՐԱՎԱՐ, ՑԵՓԵ ԺԱՄԱՅՈՒՅՑ
ԶԱՐԱՐ


Ի՞՞նչ մեծ նշանակություն ունեն մեր
կյանքում այդ յերկու փոքրի կ սլաքները,
վորկարծես թե անտեղի պտտվում են բո-
լորակի յերեսին:

ՅԵՆԹԱՊԵ-
ՐԵՆՔ, ԹԵ ՎԱՂԻ
ՄԱԲՈՂ աշ-
ԽԱՐԻ ԺԱՅԱ-
ԳՈՎԵԳՆԵՐԸ մի-
անգամից փչա-
ցան: Ի՞՞նչ սար-
սափելի անկարգություն կստեղծվի:
Յերկաթուղու վրա բազմաթիվ խորտա-
կութիւններ կպատճեն, վորովհետեւ առանց



չվացուցակի հնաբավոր չեղնացքների անցուղարձը ղեկավարել իսկ առանց ժամացուցի ցուցակն ոգուտ չունի:

Ծովի մեջ նավերը ճանապարհը կկորցընեն, վորովհետև վոչ մի. նավապետ առանց ժամացուցի չի կարող վորոշել, իր նավը վերտեղ ե գտնվում



Գործարաններում
աշխատանքն անհրաժեշտին կդառնա: Ձեզ վորդործարանի մեքենաներն ստուգցուցակով են աշխատում: Գործվածքը

հեղեղի պես անընդհատ մեքենայից մեքենա, բանվորից բանվոր ե անցնում:


Ամբողջ գործարանը հարկուրավոր մեքենաներից բաղկացած մի հսկայական մեքենայի պես ե աշխատում: Յեվ այս բոլոր մեծ, ուժեղ մեքենաների հրամանատարը զբանում տեղավորված մի պըուտիկ մեքենա է—ժամացուցը:

Ժամացուցը կանգնեց թե չե՞ իսկույն իրարանցումը կսկսվի. դազգահներից վորը յետ կընկնի, վորը՝ առաջ:

Իսկ քիչ հետո գործարանային ամբողջ հսկայական մեքենան կխափանվի ու կանգ կառնի:

Հապա զպրոցներում: Մաթեմատիկական ուսուցիչն իր առարկայով տարվելով՝ դասարանում ձեզ վոչ թե քառասուն, այլ հարկուր քառասուն բովել կպահի, մինչ վոր խելքներդ կորցնեք:

Յեթե հանկարծ ձեր մաքուրըն անցնի յերեկոյան թատրոն գնար, դուք շատ վաղ կեռւս լույսնը



չվառված շենքի առաջ կհանդիպեք ձեր բախտակից ընկերներին: Կամ ընդհակառակն՝ դուք կգաք սքանչանալու այն հասարակությամբ, վոր կովով ե կախարաններ ճարում:

Բալց յենթադրենք, վոր դուք վորոշել
եք, թե ավելի լավ ե յերեկոն տանն անց-



յերկու յերեք: Թե վաղուց արգեն սա-
ռել ե, ձեր կոպերն իրար են կպչում:
Վերջապես դուք պառկում եք քնելու՝ հաս-
տատ համոզված լինելով, վոր հյուրերը
չեն զա—կես զիշերին ով հյուր կդնա:
Բայց մի քանի ըոպելից հետո զանգակի ու
դռան թխթխոցի կատաղի ձայնը ձեղ
արթնացնում ե: Այդ ձեր հյուրերն են:

Նրանց կարծիքով հիմա ժամի տասն ե,
վոչ ավելի:

Ե՛լ ավելի շատ բան կարելի յե պատ-
մել—թե ուրախ, թե տխուր—ինչ կլիներ,
յեթե ժամացուց չլիներ: Բայց չե վոր

մի ժամանակ իսկապես վոչ մի ժամա-
ցուց չի յեղել—

վոչ զսպանակա-
վոր, վոչ ել ծան-
րակով:

Բայց և այնպես
մարդիկ առանց
ժամանակ կը

դառափորելու չելին կարողանում բան
անել և ելի մի կերպ չափում ելին այն:
Ինչով ելին նրանք չափում:



ԱՆՏԻԿՎԱՐԻ*) ԽԱՆՈՒԹ

Յես հավատացած եմ, վոր նախքան
այս գիրքը կարդալը դուք բոլոր նկարները
նայել եք՝ առաջինից մինչև վերջինը: Բոլո-
րը ել այդպես ենք անում, վորպեսզի հենց
առաջին ծանոթությունից իմանանք՝ գիր-
քը հետաքրքրական ե արդյոք, թե վոչ:

Զգիտեմ՝ գրքի մասին դուք ինչ կկար-

*) Հնագաճառ:

ծեք, բայց նկարները, թերևս, ձեզ քիչ
չեն մտահոգել:

Յեվ իսկապես՝ տուարկաների այդ ինչ
կուբո ե, վոր, առաջին հայացքից, իրար
հետ վոչ մի նմանություն չունեն, և վո-
րոնք ի մի լեն հավաքված նույնպես պա-
տահաբար, ինչպես և հնավաճառի խա-
նութիւ իրերը:

Մի լերեսին հնդկական բրահմանի
գավազանն ե հին ժամանակների տառե-
րով փորագրված:

Մյուս լերեսին բրոնզե մի զանգակ ե՝
սրբերի ռելեֆ պատկերներով, վոր ժա-
մանակից կանաչ գույն ե տառցել:

Ահավասիկ կոճակավոր մի հին գիրք:
Այս գրքի կազմը հաստ կաշուց ե, վոր
հիմա չեն անում, և շատ տեղ ասես մե-
խով ծակծկած լինի։ Այդ այն մեծ մըկ-
ների արածն ե, վոր վաղուց արդեն
չկան աշխարհում:

Այսուհետեւ՝ ձեթի ճրագ, վոր այժմյան
նավթի լամպի նման չի։ Վոչ ապակի

ունի, վոչ ել ալրիչ։ Յեղեգից պատրաս-
տած պատրությը ծուխ ե տալիս ու պա-
տերը ծածկում մրուրի (ԿՈՊՈՏԵ) սև վոս-
տակնով։

Կողքին՝ մակուլկանման ու վիշապա-
գլուխ զիզի-պիզի։ Մի մեղրամոմ՝ զու-
զոլ բաժանված 24 մասի։ Սյունածե ար-
ձանի պատվանդանի մոտ կանգնած են
սիրո լերկու աստված, նրանցից մեկը լա-
լիս ե, իսկ մյուսն արձանի վրա նկատ-
ված ինչ վոր բան ե ցուց տալիս գա-
վագանով։

Յեվ, վերջապես, այս բոլոր հին ու
անպետք բաների մեջ, վոր վաղուց ե
ինչ մարդու ձեռք չի կպել՝ մի իսկական
կենդանի աքաղաղ կա, վոր թերը թա-
փահարում ու կանչում ե։

— Ծուղրուղու-դու։

Ի՞նչ ե նշանակում այս բոլորը։ Յեվ
ինչու համար են այս բոլոր բաները նկար-
ված այս գրքի մեջ, վոր կոչվում ե «Ժամի
քանիսն ե»։

Ճրագը, վիշապը, գավազանը, մոմը—
այս բոլորը ժամացուցներ են, վոր յերբ
դեռ խկական զսպանակավոր կամ ծան-
րակով ժամացուցներ չկային, մարդ-
կանց ցուց ելին տալիս ժամանակը:

ՄԻ ԿՈՒՍՍԱԿՐՈՆԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Այս գրքում նկարված հանելուկային
նկարներն այս բացատրությունից հետո
դժվար թե ձեզ պակաս հանելուկային
ժվան:


Գավազան, գիրք, ճրագ—բայց միթե
այս բոլորը ժամացուց են:

Հենց բանն ել այն ե, վոր միլիոնա-
վոր, զանազան տեսակ միջոցներով կա-
րելի յե ժամանակը չափել: Այն ամենը,
վոր փոքրիշատե ժամանակ ե տեսում, կա-
րող ե ժամանակի չափ լինել ճիշտ այն-
պես, ինչպես յերկայնություն ունեցող
բոլոր բաները կարող են յերկայնության
չափ լինել:

Այս եջը կարդալու համար ձեզ վորոշ

ժամանակ ե պետք ե: Ուրեմն՝ ձեր կար-
գայած եջերի թվով դուք կարող ելիք
ժամանակը չափել:

Որինակ՝ դուք կարող ելիք ասել, թե
23 եջից հետո կարող եք պառկել քնելու,
կամ թե ձեր յեղբայրը մտավ սենյակը
յերկու եջ առաջ:



Ահավասիկ հանելուկային նկարներից
մեկի բացատրությունը: Հաստ գիրքը,
վորի կազմն առնետները կրծել են, սաղ-
մոս ե և Բենեդիկտյան միաբանության
կուսակրոն յեղբայր Ավգուստինն եր: Այս
կուսակրոնն իրենց վանքի ժամկոչն եր:
Ամեն գիշեր, կես գիշերից յերեք ժամ
հետո, նա պետք ե զանգը տար ու յեղ-

բայրներին զարթեցներ առավոտալան ժամ
մերգության համար։ Բայց գիշերն ինչ-
պես կարող ես ժամանակն իմանալ, քա-
նի վոր՝ ժամացուց չկա։ Զե՞ վոր՝ այս
ըանը մոտ հազար տարի առաջ եր, յեր
վոչ մի ժամացուց չկար։



Յեղբայր Ավգուս-
տինը ժամանակը
չափում եր շատ
պարզ կերպով։ Յե-
րեկոցից նա սկսում
եր իր սաղմոսը կար-
դալ ե, հենց վոր
հասնում եր «Իդի-
ֆումովի դպրապե-
տին, Սաղմոսերգու-

ասաֆով» բառերին, իսկույն վաղումեր
զանգակատուն։

Ճիշտ ե՝ նա մի անգամ մեղքի մեջ եր
ընկել—գիրքը կարդալու ժամանակ քնել

և յերբ զարթնել եր, արեն արդեն
բարձրացած եր յեղել։ Բայց վանա-
հորից—հայր Դեղիդերիոսից—մի լավ կե-
րել եր։

Պարզ բան ե, վոր գիրքը ճիշտ ժա-
մացուց չի։ Որինակ՝ դուք արագ եք
կարդում—ժամում քսան եջ, իսկ ճեր
յեղբայրն այդ ժամանակամիջոցում յեր-
կու եջ ել չի կարող վերջացնել։ Յեր ժա-
մանակն այլ կլինի, նրանը՝ այլ Բայց
պետք ե վոր ժամանակը միատեսակ լինի
բոլորի համար։

Ահա թե ինչու ժամանակը չափելու
միլիոնավոր միջոցներից շատ քչերն են
միայն լավ։

ՅԵՐԿԱՆՔԻ ԺԱՄԱՆԱԿԸ ՅԵՐԿԱՆՔ

Կուսակը Ավգուստինի պատմու-
թյունը դեռ չի վերջացել։


Բանն այն ե, վոր նրա զանգ տա-
լուց վոչ միայն կուսակը ներն ելին վեր

կենում, ալլև այն ավանի բնակիչները,
վորի մոտ գտնվում եր վանքը:

Այդ առավոտ ջուրհակները, ներկա-
րաբները, մահուղ ծախողները, կոճակ
ու համրիչ ծա-
խողները, կոշկա-
կարները, վոր
վանքի մոտ ելին
ապրում, այնպես
ել չելին կարող
զանգի ձայն լսել:

Արեկի վառ ճառագայթներից արթնանա-
լով՝ նրանցից վոմանք սկզբից կարծել
ելին, թե հրաշք ե կատարվել—արել կեռ-
դիշերին ե դուրս լեկել, Բայց, ուշքի
դալով, նրանք գլխի ելին ընկել, վոր ա-
րեկին ավելի շատ կարելի յե հավատալ, քան
յեղբայր Ավգուստինին, վորովհետև արել
գինի չի խմում, իսկ յեղբայր Ավգուս-
տինն արդ մեղքն ունի:

Բայց վոչ միայն այն ժամանակ, ալլև



բոլոր ժամանակները մարդիկ արևն ա-
մենաձիշտ ժամացուցն են համարել:

Որը տասներկու ժամի բաժանելուց
շատ առաջ՝ մարդիկ ժամանակն արևով
ելին իմանում։ Մենք հենց հիմա յել փո-
խանակ ասելու «այսինչ ժամին», ասում
ենք՝ լուսաղեմին, կեսորին (այսինքն յերբ
արել յերկնքում ամենաբարձր տեղն ե),
վերջալույսին, մթնշաղին, մայրամուտից
հետո։

Մի ժամանակ, յերբ դեռևս քաղաք-
ներ ու ֆաբրիկներ չկալին, մարդիկ ժա-
մանակը ձիշտ չափելու կարիք չելին զգում։

Բայց յերբ այստեղ ու այնտեղ քա-
ղաքներ առաջացան, տոնավաճառներ ու
շուկաներ ծաղկեցին, արհեստավորների
արհեստանոցներում մուրճեր չխկչխկա-
ցին, ճանապարհներին վաճառականական
քարավաններ շարվեցին—յերկնային ժա-
մացուցն սկսեց մարդկանց սխալ թվալ։

Յեկ իսկապես, միթե կարելի յե աշ-

քի չափով վորոշել այն ճանապարհը, վոր
արել դուրս գալուց հետո յե կարողացել
անցնել։ Բայց ինչ ձևով կարելի յե ալդ
ճանապարհն ավելի ճիշտ վորոշել։

Ամենահեշտը վոտքով չափելը կլի-
նել, ինչպես մարդիկ սովորել ելին դետ-
նի վրա ալդ անել։ Այն ժամանակ քայլը
յերկայնության նույնպիսի չափ եր ինչ-
պես մետրը մեզ համար։ Բայց չե, վոր
յերկինքը գետին չի, այնտեղ մագլցել
չես կարող։

Բարեբաղդաբար՝ աշխարհում միշտ
ել այնպիսի մարդիկ են դտնվել, վորոնք
հնարավոր են դարձրել այն, ինչ ուրիշ-
ներին անհնար եր թվում։

Ինչպես մեր ժամանակ են մարդիկ
սովորել ողի մեջ թոշել, ջրի տակ լո-
ղալ, զանազան քաղաքներից իրար հետ
խոսել, այնպես ել հնում մարդիկ ան-
լուծելի խնդիր են լուծել—սովորել են
ժամանակը քայլերով չափել։

ՄԱՐԴԻԿ ՔԱՅԼԵՐԱՎ,
ԻՆՉՊԵՍ ԵՆ ԶԱՓԵԼ,
ԺԱՄԱՆԱԿԻ.

Հույն գլող Արիստո-
ֆանի կատակերգության
մեջ, վոր 2300 տարի ա-
ռաջ ե գրվել այսպիսի
մի տեղ կա։ Աթենունի
Պրակսագորան իր ամու-
սին Բլեպիրոսին ասում
ե. «Յերբ սովերը տասը
քայլի հասնի, անուշա-
հուտ յուղերով քեզ ոծիր
և լեկ ընթրենք»։

Պետք ե ասել, վոր
մարդիկ այն ժամանակ
իրենց արդ ու դարդի
մասին շատ տարութինակ
կերպով ելին հոգում փո-
խանակ մարմնի կեղտը
լվանալու, ամեն տեսա-
կի հոտավետ ոծանելիք-



Ներ ու յուղեր ելին քսում, միայն թե կեղա
չերևարու լավ հոտ արձակեր: Բայց բանն
այդ չի: Ի՞նչ ե նշանակում այս արտահայ-
տությունը—Ստվերը տասը քայլի հասնի:

Հստ լերեվութին այն տնից, վորտեղ
Պրակսագորան և Բլեպիրոսն ելին ապ-



րում, քիչ հեռու սյուն կամ արձան
ե կանգնած լեղել: Արև որերին (իսկ Հու-
նաստանում համարյա բոլոր որերն արև
ե լինում) արձանն ստվեր ե դցել: Ժա-
մանակն իմանալու համար անց ու դարձ
անողները ստվերը վոտքով չափել են:
Առավոտյան ստվերը յերկար ե լեղել, կես
որին բոլորովին կարճացել ե, իսկ յե-
րեկոյան դեմ՝ նորից յերկարել:

Ահա և ձեզ պատասխան այն հարցին,
թե մարդիկ ինչպես ելին վոտքով ժա-
մանակը չափում:

Ինչպես միշտ, լուծումը նույնքան հեշտ
եր թվում, վորքան հանելուկն եր բարդ
թվում:

ՀՆԴԻԿ ՖԱԿԻՒԹԻ ՖՈԿՈՒՄԸ

Այն սյունը, վոր իբրև ժամացուց ե-
լին ոգտագործում, կոչվում եր գնոմոն*):

Ինչ խոսք, վոր գնոմոնը շատ անհար-
մար ժամացուց եր: Բացի այն, վոր միայն
արև որերին եր ժամանակը ցուց տա-
լիս և այն ել չափազանց սխալ, ճանա-
պարհ գնալիս հնարավոր չեր գնոմոնը
հետը տանել: Բայց չե վոր ճանա-
պարհին ժամացուցն անհրաժեշտ ե:

Հնդիկ ֆակիրները—բոլորին ծանոթ
ալի ֆոկումնիկները—ինդիրը պարզ ու
սրամիտ կերպով են լուծել. Նրանք ճա-
նապարհի սովորական ձեռնափակուր ժա-
մացուց են դարձրել:

*.) Արևի ժամացուց: Ծ. Թ.

Հեռու ճանապարհ՝ սուրբ
թենարես քաղաքը գնալիս
ֆակիրն առանձին կառուց-
վածքի մի գավաղան եր վեր-
ցընում հետը:

Այդ գավաղանը մեր գա-
վաղանների պես կլորչե, այլ
ութ կողանի յե: Վերեկց ա-
մեն մի կողին մի անցք ե
արված, վորի մեջ մի բարակ
փայտ ե դրվում:

Որվա ժամն խմանալու հա-
մար ֆակիրն իր գավաղանը
թելց բռնած բարձրացնում ե:
Փոքրիկ փայտից ուղղաձիգ
կախված գավաղանի կողին
ընկնող ստվերը ցուց ե տա-
լիս ժամանակը:

Այս դեպքում ստվերի յեր-
կարությունն ամեն անգամ
չափելու կարիք չկա, վորով-
հետեւ կողի վրա ժամը ցուց
տվող գծիկներ են արված:

Բայց այդքան կողերն ինչի՞ համար են:
Թվում ե, թե մեկն ել բավական ե:
Բանն այն ե, վոր տարվա տարբեր ժա-
մանակներում արեի տեսանելի ճանա-
պարհը տարբեր ե: Ուստի և ստվերը, վոր



միանգամայն կախում ունի արեից, ա-
մառն ու ձմեռն իրեն միատեսակ չի պա-
հում: Ամառն արեը յերկնքում ավելի բար-
ձըր ե լինում քան ձմեռը. այս պատճա-
ռով ել ամառվա կեսորին ստվերն ավելի
կարճ ե լինում քան ձմեռը:

Ահա թե ինչու գալազանը բազմակող
և պատրաստված։ Ամեն մի կողը տարվա
վորեւ ժամանակի համար եւ ար-
ված, և ուրիշ ժամանակի համար պետք
չի գալիս։

Յենթագրենք, թե բանը հոկտեմբերի
մեջին եւ պատահում։ Թակիրը փոքրիկ
փայտը դնում եւ այն կողի մեջ, վորի
վրա «Արխման» հին բառը՝ ամսի անունն
եւ փորագրված։ Արխմանը մեր սեպտեմ-
բերի կիսից մինչև հոկտեմբերի կեսն եր
տեսում։

Դուք ինքներդ ել հեշտությամբ կա-
րող եք ալգակիսի մի ժամացուց պատ-
րաստել։

Բավական եւ չորս կող՝ այն չորս ամսի
համար, վոր քաղաքից դուքս եք անց-
կացնում։

Զմեռը գալազանը ձեզ պետք չի գա,
և, բացի ալդ, արեն ել սակավ ե
դուքս գալիս։

Ժամացուցի նշանները փորելու հա-

մար դուք ստիպված պետք եւ լինեք չորս
որ կորցնել՝ ամսին մի որ։ Առավոտյան
վեր կենալիս ասենք թե ժամի 7-ին,
փոքրիկ փայտն անցկացրեք կողերից մե-
կի մեջ ու մի նշան փորեք այն տեղը,
վորտեղ ստվերը վերջանում եւ ժամի ու-
թին յերկորդ նշանը փորեք, և այսպես՝
մինչև արել մայր մտնելը։

ՑԻՖԵՐԲԼԱՏՈՎ, ԲԱ.33 Ս.ՆՍԼԱ.Ք ԺԱՄԱ.ՅՈՒՅՅ

Մեր վաղեմի ծանոթ Պրակսագորալի
ու Բլեպիրոսի որով Հունաստանում տեղ-
տեղ արգեն կարելի յեր նոր ու ավելի
հարմար ժամացուցի հանդիպել։ Բատ ա-
վանգության, նոր ժամացուցը Հունաս-
տան եր յեկել Բաբելոնից, վոր վաղուց
արդեն հոչակիված եր գիտնականներով։
Այն ժամանակները Բաբելոնն աշխար-
հիս ամենամեծ քաղաքներից մեկն եր։
Աղմկալի շարժում փողոցներում։ վա-
լելուչ կարգով, անց ու դարձ անող զին-

վորների ջոկատներ. հոտավետ ոծանելիքներ, քաղցրավենիք ու պաճուճանք վաճառող առևտրականներ. միրուքն արհեստական կերպով խուճուճած, մատներին ողեր դրած, վոսկե գլխով զարդարուն ձեռնափայտ կրող պճնամոլներ. և արեվելան այս ամբողջ խայտաբղետ ամբոխի գլխավերել՝ բարձր բազմահարկ տներ—ահա այսպես եր Բաբելոնը յերկու հազար հինգ հարյուր տարի առաջ: Յեվ զարմանալի չե, վոր գիտությունն ել ծաղկում եր այս հարուստ ու վազմամարդ քաղաքում:

Բաբելացիք հույներին շատ ալլպիսի բաներ են սովորեցրել, ինչպես Պետրոս Մեծի ժամանակ մեր ուսուցիչները գերմանացիք, հոլանդացիք ու շվեդներն են յեղել. Բաբելացիք հույներին սովորեցրել են ժամանակը բաժանել հավասար ժամանակամիջոցների՝ ժամերի. այս բաժանումը շատ տարիներ հետո հույներից անցել ե Յեվրոպայի մլուս ժողովուրդներին: Հենց նրանք ել, ասում են Հույ-

ներին սովորեցրել են նոր ժամացուց՝ առաջին, ցիֆերբառ ունեցող ժամացուցը պատրաստել: Ճիշտ ե, պետք ե ասեր վոր այդ ժամացուցը մի աննշան բանի՝ ուղաքի պակասություն ուներ:

Սլմք, հարցնելու յեք դուք: Բայց այսնց սլաք ժամացուց կլինի: Վորպեսզի համոզվեք, վոր այդպիսի ժամացուց կա, դուք կարիք չեք ունենա Ասիա գնալու, այնտեղ, ուր մի ժամանակ Բաբելոնի տներն ելին բարձրանում: Մեզնում



Լենինգրադում, և հենց ԽՍՀՄ-ի ուրիշ շատ քաղաքներում ել կարող եք այնպիսի ժամացուցներ տեսնել, ինչպես հին բաբելացիների մոտ:


Եենինգըրադից Մոսկվա տաճող հին ճառապարհի վրա մինչև որս ել տեղաւեղ վերատասլուներ կան, զոր գեռ Յեկատերինա Ա-ի որով են կանգնեցված։ Այդ սյուներից Եենինգըրադի Մեժգունարոդնի պրոսպեկտում (Թունտանկի ու Շ-բդ կարմիր-բանակալին փողոցի մոտ) ել, Դետուկոյե Սելոյում Որովլան դարպաների մոտ ել կան։

Դետուկոյե Սելոյում յեղած սյունի մի յերեսին գրված ե՝

Սանկտ Պետերբուրգի 22 վերս:

Իսկ մյուս յերեսին՝ քառակուսի տաշած սալաքար, մեջտեղը յերկաթե յեռանկյունի թիթեղ ու շուրջը հոռմեական թվանըշաներ։


Հոռմեական թվանշանները ժամն են ցուց տալիս, իսկ թիթեղի ստվերը փոխարինում ե ոլաքներին։ Նայած թե արեւ յերկնքում իր ճանապարհն ինչպես ե անցնում, թիթեղի ստվերը սլաքի նման շարժվում ու ցուց ե տալիս ժամանակը։



Արևի ժամացուց ե այդ, այն ժամացուցներից, վոր գեռսս հին Բաբելոնում հարդի ելին:

Վերստասայունի ձոռով անցնելիս ճանապարհորդը, կառեթի լուսամուտից զըլուխը հանելով, խճանում եր, թե քանի վերստ ճանապարհ ե մնացել և ճանապարհին վնրքան ժամանակ ե կորցրել:

Արևի ժա-



մացուցն ի
հարկե ավելի
լավ ժամաց-
ցուց եր, բան
գնոմնը կամ
ֆակիլի գա-

վազանը, և ժամանակին ավելի պարզ ու ճիշտ եր ցուց տալիս

Է Բայց և այնպես այդ ժամացուցը մեր ժամացուցից շատ հեռու լեր: Դժվար թե դուք ձեր ժամացուցից գոհ լինելիք, իեթե միայն պարզ լեզանակին աշխատեր, իսկ զիշերնու վատ լեզանակին կանգներ: Այն-ինչ արևի ժամացուցն իրեն հենց այդ-

պես եթ պահում։ Ինչպես հին ժամանակներն ելին ասում, դրանք «ցերեկվաժամացուց ելին»։

Շատ վաղուց, թերես արևի ժամացուցին հետ միաժամանակ, հնարյած ե յեղել նաև գիշերվաժամացուց։

ԽՎԱՆ ԽՎԱՆԱՎԻԶԲ ՈՒ ԽՎԱՆ ՊԵՏՐՈՎԻԶԲ ԶԲՈԽՅՅԲ



Յերկու հին բարեկամ՝
Խվան Խվանիչն ու Խվան Պետրովիչը տառը
տարի իրար չելին հանդիպել։ Յեզ հանկարծ
փողոցում նրանք կանգնում են դեմառվեմ։

Այս դեպքում ինչ պետք է ասեր Խվան Խվանիչը և նրան ինչ պետք է պատասխաներ Խվան Պետրովիչը։

Չեմ կասկածում, վոր Խվան Խվանիչը յերկու համբուլի արանքում բացադանչել ե.

— Ինչքան ջուր ե հոսեր, սիրելի Խվան Պետրովիչ։

Խվան Պետրովիչը նրան պատասխանել ե.
— Շատ, Խվան Խվանիչ, շատ։

Բայց թե նրանք—Խվան Խվանիչն ու Խվան Պետրովիչը հասկանում են արդյոք, թե ինչ ե նշանակում այս տարորինակ դարձվածքը։

Ի՞նչ ջրի մասին ե խոսքը։

Ուր ե հոսել այդ ջուրը, վոր տեղից։
Կարծում եմ, վոր մեր բարեկամներն այս առթիվ վոչ մի պարզաբանություն չելին կարող տալ։

Խվան Խվանիչի ասած դարձվածքը շատ վաղուց բոլորովին կորցրել ե իր իմաստը, և մարդիկ թուժակի պես են կրկնում այն, առանց մտածելու, թե ինչ ե նշանակում։

Բայց ահա, թե ինչ ե նշանակում այդ։

Արդեն շատ վաղուց դլիսի ելին ընկեր վոր ժամանակը կարելի յե ջրով չափել։

Յեթե ինքնալեռը ջուր լցնենք ու ծո-

բակը բաց թողնենք, ջուրը՝ կդնա: Յեն-
թաղընք թե այս բանի համար մի ժամ
ժամանակ ե պետք: Յեթե մենք, առանց
ծորակին ձեռք տալու, ինքնայեռի մեջ
առաջվա չափ ջուր լցնենք, ջուրն ելի
նույնքան ժամանակում կթափիվ՝ վոչ կես
ժամում՝ վոչ ել ժամ ու կեսում, այլ ու-
ղիղ մի ժամում:



Ուրեմն այդ ինք-
նայեռը կտրելի յե-
ժամացուցի տեղ
բանեցնել: Հարկա-
վոր ե միայն ամեն
անգամ դատարկվե-
լուն պես՝ նորից
լցնել:

Բաբելոնում այդ տեսակ ժամացուցը
գեռևս 2500 տարի առաջ հարգի յեր:
Բայց իհարկե ջուրը լցնում ելին վոչ թե
ինքնայեռի մեջ—այն ժամանակ ինքնա-
յեռ չկար —այլ նեղ ու բարձր անոթի

մեջ, վոր ստորին մասում անցք ուներ:
Ժամացուցի մոտ գրված հասուկ մար-
դիկ արևածագի ժամանակ անոթը լիքը
ջուր ելին լցնում: Հենց վոր ամբողջ ջուրը
դուրս եր գալիս, նրանք բարձրագոչ հայ-
տարարում ելին քաղաքի բնակիչներին
ու անոթը նորից լցնում: Նրանք որական
վեց անգամ արսպես ելին անում:

Ջրի ժամացուցը շատ անհարմար եր.
գլխացավանք շատ ուներ: Բայց դրա
փոխարեն նա կարող եր ժամանակը ցուց
տալ թե վատ լեզանակին և թե նույնիսկ
զիշերը: Ահա թե ինչն համար եր այս
ժամացուցը «գիշերվա» ժամացուց ան-
վանում՝ ցերեկվա ժամացուցից տարե-
րելու համար:

Դեռևս մոտ ժամանակներս Զինաստա-
նում կարելի յեր ջրի վաղեմի ժամացուցը
տեսնել:

Պղնձե չորս մեծ կաթսա իրար հետեւից
շարված են քարե սանդուղքների աստի-
ճաններին: Ջուրը մի անոթից մլուսի


մեջն ե լցվում: Յերկու ժամը մի անգամ (կամ «կեն» մի անգամ, ինչպես չինացիք են ասում) սպասավորը գրված տախտակ ե կախ տալիս, վորը ցույց ե տալիս, թե վնր «կեն» ե:

Ի՞նչ դժվար բան հասկանալ, թե ի՞նչ կարիք կար կաթսաներն ալդպես դասավորելու: Սպասավորը միայն վերեի կաթսան պետք ե լցներ, իսկ մնացածներն իրենք իրենց ելին լցվում ինքնահոսով, իրար յետելից:

Չգիտեմ՝ հիմա յել այդ ժամացուցից բանեցնում են, յերբ Զինաստանն ել ամեն տեսակի մեքենաներ, ռադիո ու ոդանավեր են մուտք գործել: Բայց ասում են, վոր 25 տարի առաջ այդ ժամացուցը հարգի յեր:

ԿԱԹԻ ԺԱՄԱՑՈՒՅՑ

Կաթի ժամացուց: Այդ ի՞նչ դատարկ բան ե: Կաթնակեր խոճկոր, կաթնակեր հորթ, կաթով շոկոլադ, կաթնատամ լի-





նում են: Բայց ինչ ասել է կաթի ժամացուց: Այդ կաթե ժամացուցի մասին լեռ կարգացել եմ ժամագործության արվես-



տին վերաբերող մի հին գրքում: Այդ գրքում ասված ե, թե հին Յեղիպառառում Նեղոսի կղզի-




ներից մեկում գըտնվում եր Ողիրիս աստծու տաճարը: Տաճարի մեջտեղը կլոր գրված են յեղել 360 մեծ անոթ, վոր հատակի մոտ անցք են ունեցել: Յուրաքանչյուր անոթի մոտ հատուկ քուրմ ե գրված լեզել, այնպես վոր ընդամենը 360 քուրմ: Ամեն որ քըմերից մեկն իր անոթը լիքը կաթ

Եր լցնում։ Կաթն ուղիղ 24 ժամում ելր դուրս գալիս։ Այնուհետև քուրմը մյուս անոթն եր լցնում և այսպես շարունակաբար—ամբողջ տարին։

Մենք, իհարկե, գժվար կարող ենք հասկանալ, թե այդքան «կաթի ժամացուցը յեզիպտացոց ինչին եր պետք և թե ինչու յեզիպտական փարավոնները գլխի չեն ընկել Ոզիրիսի տաճարում հաստիքների կրծատում կտտարելու։

Չե վոր 360 մարդ պահելը, վորոնց արածը միայն այն եր, վոր զուր աշխատանք ելին կատարում, եժան չեր նստում։

Զրի ժամացուցի ջուրը միայն կաթով չեր, վոր փոխարինում ելին։



Հարգի յե, և հենց այժմ ել գործ ե ածավում, ավաղի ժամացուցը։

Ժամացուցը «լարելու» համար հարկավոր ե միայն շուր տալ Այդ տեսակ ժամացուցը կարճ ժամանակամիջոց՝ 3-5-10 րոպէ չափելու համար շատ հարմար ե։

Նավատորմում հարգի յեր այդ ժամացուցն ընդամենը հարյուր տարի առաջ ժամապահը կես ժամը մի անգամ ավաղի ժամացուցի «շշիկը» շուր եր տալիս։

Հին ժամանակները ժամացուցի համար ավաղ պատրաստելը հատուկ հմտություն պահանջող գործ եր համարվում։

Ասում ելին, թե ամենալավ ավաղը մարմարի փշրունքից ե ստացվում, յեթե գինու մեջ ինն անգամ յեռացնեն՝ ամեն անգամ փրփուրը քաշելով, վորից հետո արեի առաջ չորացնեն։


ԺԱՄԱՑՈՒՅՑՆ ՈՒ ՄԻՔՍՏՈՒՐԸ*)

Հատակի մոտ անցք ունեցող անոթը, վորի միջից ջուրը կաթիւ-կաթիւ եր դուրս

*) Հեղուկաղեղ։ Ծ. Թ.

դալիս, ջրի ժամացուցի ամենապարզ
ու սկզբնական ձևն եր: Բայց ջրի ժամա-
ցուցը շատ շուտով փոխվեց ու բարե-
լավվեց:

Ամենից առաջ պետք ե հոգ տարվեր, վոր
անոթը, վորքան կարելի է, ուշուշ ջուր
լցվեր:



Յեզ իսկապես, շու-
տով գլուխի լեն ընկնում,
վոր մի ինչ վոր ժամի
համար նախատեսված
փոքրիկ անոթի փոխա-
րեն՝ ամբողջ որ ու զի-
շերվա պաշար ունեցող
մեծ անոթ կարելի լե վերցնել: Բայց և
այնպես, վոչ թե որերը, այլ ժամերը
չափելու համար, անոթը գծիկներով բա-
ժանում են 24 մասի: Այժմ ջրի մակար-
դակն ինքն և ասում, թե ժամի քանիսն
ե: Ուրեմն բավական եր միայն նաև ել,
թե ջուրը մինչև վոր գծիկն ե իջել:
Պուք, հավանորեն, տեսել եք իսպա-

վոր (նշան արած) այն բաժակները, վո-
րոնցով հիվանդին դեղ են տալիս:

Բաժակի կողին յերեք գծիկ ե արված
ցածի գչիկի առաջ գրված ե «մի թելի
դրալ», մեջտեղի գծիկի առաջ՝ «քաղցրա-
վենու դրալ», իսկ վերևի գծիկի առաջ՝
«մի հացի գդալ»:

Այսպես ել ջրի ժամացուցի անոթն
եր պատրաստված: Միայն թե յերեք
գծիկի փոխարեն նրա կողին 12 կամ 24
գծիկ եր արված, և նրանով վոչ թե դեղ
ելին չափում, այլ ժամանակը:


Բայց մի անհարմարություն ուներ,
վոր ստիպված ելին հաշվի առնել:

Բանն այն ե, վոր ամեն անգամ ջուրը
միահավասար արագությամբ դուրս չի
դալիս անոթից: Սկզբից, քանի դեռ ջուրը
շատ ե, արագ ե դուրս դալիս, քան հե-
տո, յերբ ավելի ու ավելի լե պակասում:
Շատ հասկանալի լե: Անոթի մեջ վորքան
շատ ջուր ե լինում, այնքան ել շատ ճըն-
շում, իսկ ճնշումը վորքան շատ լինի, այն-

քան ել ջրի արագությունը շատ կլինի
Նույնն ե, ինչ ջրմուղում Զրամբարը վոր-
քան բարձր դրված լինի, այնքան ել
ջուրն արագ կհոսի խողովակներով:

Բանից դուրս եր դալիս, վոր սկզբ
ժամերին ավելի շատ ջուր եր դուրս դա-
լիս, քան վերջին: Զրի մակարդակն սկզբ-
բից արագ եր իջնում, իսկ հետո՝ ավե-
լի ու ավելի դանդաղ: Վորպեսզի ժամա-
ցուցն այնուամենայնիվ չխաբեր, ստիպ-
ված ելին գը-

ծիկներն իրա-
րից միանման
հեռավորու-
թյան վրա չա-
նել, այնպես
վոր վերևի գը-
ծիկները նոսր
պետք ել լինե-
լին, իսկ ներ-
քեվինը՝ խիտ:
ինչպես տես-



նում եք, ջրի ժամացուցը նիշնշելը (նը-
շաններ անել) այնքան ել հեշտ բան չի
յեղել:

Մի ուրիշ, ավելի հարմար, յեղանակ ել ե-
յեղել: Անոթը ձագարածե են պատրաս-
տել: Յերբ հարմար ձագար եր ընտրված
լինում, գծիկները կարելի յեր հավասար
տարածության վրա անել:

Իսկապես՝ վերևի յերկու գծիկի մեջա-
վելի շատ ջուր ե տանում, քան հաջորդ
յերկուսից Բայց հենց այսպես ել պետք
ելինի: Չե վոր սկզբի ժամին, յերբ ջուրը
շատ ե, շատ ել դուրս ե դալիս, քան հա-
ջորդ ժամին:

ՄԵԾ ԺԱՄ ՅԵՎ ՓՈՔԻ ԺԱՄ

Յեթե յես ասում եմ, թե գրքի այս
գլուխը ուղիղ մի ժամում եմ գրել բո-
լորս ել հասկանում ենք, թե ինչ են նշա-
նակում:

Բայց հին ժամանակները—մոտ յերկու
հազար տարի առաջ ինձ կհարցնելին,

թե յես վոր ժամի մասին եմ խոսում՝
մեծ, թե փոքր:

Բանն այն է, վոր հին յեզիպտացիք,
հույներն ու հումեացիք որը նույնպես
24 ժամի ելին բաժանում, բայց վոչ բու-
լողովին մեզ պես:

Ամենից առաջ նրանք որը բաժանում
ելին ցերեկի-արևածագից մինչև մայրա-
մուտ, և գիշերվա, այսինքն մայրամուտից
մինչև արևածագ, իսկ գիշերն ու ցերե-
կըն ել իրենց հերթին 12 ժամի ելին բա-
ժանում.

Բայց չե վոր տարբեր գիշերներ ու ցե-
րեկներ են լինում: Այդ պատճառով ել
ամառը ցերեկվա ժամերը յերկար ելին
լինում, իսկ գիշերվանը՝ կարճ. ձմեռն ել
ցերեկվա ժամերն ելին կարճ լինում, իսկ
գիշերվանը՝ յերկար:

Յեզիպտոսում մի վորհե տեղ ամառը
ցերեկվա ժամը մեր հաշվով 1 ժամ 10 րոպե-
յեր տևում, իսկ ձմեռվա ցերեկվա ժա-
մը՝ ընդամենը միայն 50 րոպե:

Մեզ մոտ՝ հյուսիսում, վորտեղ ձմեռն
արել շատ կարճ և յերեվում, ձմեռվա ցե-
րեկվա ժամն ընդամենն ինչվոր քառա-
սուն րոպե կարող ել տեղել միայն: Այդ
կլիներ փոքր ժամը: Բայց գրա փոխարեն
գիշերվա ժամը վոչ թե մի ժամ կլի-
ներ, այլ մեծ ժամ՝ ամբողջ 1 ժամ 20
րոպե:


Այս խառնաշփոթության պատճառով
ել ամառ ժամանակի համար պատրաս-
տած ժամացուցը ձմեռվա համար ան-
պետք եր, և ընդհակառակը:

Հարկավոր եր մի կերպ բանը շտկել:

Ձմեռն որն ավելի կարճ եր քան ամա-
ռը: Ուրեմն՝ ձմեռը ձագարի մեջ ջուր քիչ
պետք ել լցնել, վոր շուտ դուրս գա: Որի-
նակ՝ յեթե ամառը յերկու գավաթ ջուր
պետք ել լցվի, ձմեռը մի գավաթն ել բա-
վական ել:

Բայց թե ինգիրն այնքան ել հեշտ չի
լուծվում, ինչպես վոր թվում ե: Զե վոր
թե ամառը և թե ձմեռը ձագարը լիքը

պետք ե լցվի — մինչև առաջին դժիկը՝
իսկ յեթե յերկու գավաթի փոխարեն
մեկը լցնենք, ձագարը կիսատ կմնա:



Հապա ի՞նչպես անենք: Ի՞նչ անենք, վոր
թե գալը կուտշ լինի, թե հոտը՝ լրիվ»,
վոր ջուրը քիչ լինի, բայց ձագարը
մինչև բերանը լցվի:
Ահա թե ինչ են հնարել:

Չագարաձե կոն են շինել՝ նույնպիսի
ձագարը, բայց մեջը լիքը և զոչ թե դա-
դարկ: Յեթե այս կոնը դնեն ձագարի
մեջ, յենթադրենք՝ մինչև կեսը, ձագարի
մեջ ազատ տեղ քիչ կմնա, և քիչ ել
ջուր կտեղավորվի: Ուրեմն՝ ձմեռը կոնը
պետք ե ցածրացնել, իսկ ամառը՝ բարձ-
րացնել: Յեկ վորպեսզի ամեն մարդ կա-
րողանա այդ անել, այն քանոնը վորի
վը կոնը պահվում ե, «բաժանված ե
գծիկների: Այդ գծիկները ցույց են տա-
լիս, թե կոնը վորքան խոր պետք ե
իջեցնել՝ նայած տարվա յեղանակին:

Այդ ժամացուցյը, ինչպես տեսնում եք,
ավելի բարդ ե յեղել, քան սկզբնականը:
Ճիշտ ե՝ յեթե մարդիկ գլխի ընկնելին
որը (սուրբ) մեզ պես հավասար ժամե-
րի բաժանելու, ջրի ժամացուցը շատ ա-
վելի պարզ կլիներ:

ԿԵՆԴԱՆԻ ԶԱՐԹՈՒՑԻՉԸ

Բարելոնից ու Յեգիպտոսից, վորտեղ
ջրի ժամացուցը մուտք ե գործել ան-

հիշելի ժամանակներից, այդ ժամացուցն
այնուհետև ընկել ե հույների ձեռքը,
հույներից ել՝ Հոռմայեցոց:

Առաջին ջրի ժամացուցը Հոռմ քաղա-
քի շուկայում՝ արևի ժամացուցի կողքին
ե դրված լեզեր, վորպեսզի արևի ժամա-
ցուցով կարողանալին ջրի ժամացուցն
ստուգել:

Ջրի ժամացուցը հեշտությունը կարող
եր փչանալ. բավական ե, վոր ջուր գուրս
գալու անցքն աղտոտեր: Իսկ արևի ժա-
մացուցը, յեթե միայն յերկնքում արև
կար, ազնվորեն ու բարեխղճությանը
ցուց եր տալիս ժամանակը:

Ջրի ժամացուց կարելի յեր տեսնել
նաև մասնավոր տներում՝ հարուստ մարդ-
կանց մոտ: հատուկ ծառաները ժամա-
ցուցի մեջ ջուր պետք ե լցնելին ու հե-
տեւին, վոր չփչանա:

Բայց այդ բաղդավորները, վորոնք ի-
րենց ժամացուցն ունելին, շատ քիչ ելին:
Մյուս բոլոր քաղաքացիներն առաջա-

պես ցերեկն արեով ելին բավականա-
նում, իսկ գիշերը՝ աքաղաղով:

Գիշերը քնի մեջ քաղաքի մի վորեւ
ծայրից տքաղաղի ծոր տվող կանչերը



լսելով՝ ցերեկվա աշխատանքից հոգնած
մաքղիկ նորից ելին քնում այն ուրախա-
լի մտքով, վոր գիշերը դեռ առջևն ե: Զե՞
վոր աքաղաղները միայն կես գիշերին

են այդպես կանչում՝ ծոր տալով ու հազվագեղիք։ Այդ, ինչպես հին ժամանակներն ելին ասում, «աքաղաղի առաջին կանչն» եր միացն։

Բայց ահա աքաղաղներն սկսում են ավելի հաճախակի, ավելի ու ավելի արագ կանչել։ Աքաղաղի «յերկըրդ կանչն» ե այդ։ Շուտով լույսն ել բացվում ե։ Յեկնորից ցերեկը պետք ե սկսվի՝ նույնը, ինչ յերեկ եր։

Հազարավոր տարիների ընթացքում մարդիկ սովորել ելին կենդանի ժամացուցիս։ Չլինի թե հենց այդ ե պատճառը, վոր աքաղաղի կանչը գիշերը մերմեջ ինչ վոր անհասկանալի տագնապ ե առաջ բարում։

ՄԱՐԿՈՍԻ ՅԵՎ ՅՈՒԼԻՈՍԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Յերկու հաղար տարուց ավելի առաջ մարդիկ առանց ժամացուցի շատ հեշտությամբ կարողանում ելին իրենց բանը

տեսնել։ Առավոտյան «զինվորին լեզվուրն»*) զարթնեցնում, իսկ քաղաքացուն՝ աքաղաղը», ինչպես այն ժամանակ ելին ասում, իսկ ցերեկն հեշտ եր ժամանակն արևով վորոշել։ Բայց այն ժամանակ ել ժամացուցը վորոշ դեպքերում համարվում եր վոչ թե պերճանքի առարկա, այլ՝ անհրաժեշտ իր։

Որինակ՝ դատավորներն առանց ժամացուցի չելին կարող մնալ։ Դատական նիստերը ձգձգելու համար, նրանք անեն մի ճառախոսին վորոշ ժամանակ ելին նշանակում։ Իսկ այս անելու համար ժամացուց եր պետք։

Հույն և հոռմայեցի դատավորներն ամենապարզ կառուցվածքի ժամացուց ելին բանեցնում։ Հատակին անցք ունեցող մի անոթ եր այդ, վորից ջուրը մոտավորապես քառորդ ժամում եր դուրս գալիս։ Զրի ժամացուցը հունարեն կոչվում ե «կլեպտիդրա»։ Այդ պատճառով

*) Յեղջուրե փող։

ել, յերբ ուզում ելին ասել, թե այսինչ
չի ճառը մի ամբողջ ժամ տևեց, ասում
ելին «Նրա ճառը չորս կլեպսիդրա տևեց»:

Մի ճառախոսի, վոր ժողովում հինգ
ժամ անընդհատ խոսել եր, վերջիվերջո
այսպիսի մի հարցով են ընդհատում.

—Յեթե դու կարողանում ես ազգքան
ժամանակ տռանց շունչ առնելու խո-
սել, հապա քանի կլեպսիդրա կարող ես
լոել:

Ճառախոսը չի իմանում ինչ ասի և
ընդհանուր ծիծաղի հետ ապացուցում
է, վոր ինքն ել կարող ե լոել:

Հին գրքերից մեկում յես մի մարդու
պատմություն եմ կարգացել, վորի կյանքը
փրկողը ջրի ժամացուցն ե յեղել:

Մի անդամ Հռոմ քաղաքում մարդաս-
պանության մեջ մեղադրվող մի քաղա-
քացու դատում են: Նրա անունը Մարկոս
եր, Մի վկա յե միայն լինում՝ իր ընկեր
Յուլիոսը, վոր կարող եր նրան փրկել:

Բայց գատավարությունը վերջանում եր,
իսկ Յուլիոսը դեռևս չկար:

«Նրան ի՞նչ ե պատահել, —մտածում եր
Մարկոսը: —Միթե նա բոլորովին չի գա-
լու»:

Որենքով՝ մեղադրողին, մեղադրյալին
ու դատավորին հավասար չափով ժամա-
նակ եր տրվում խոսելու: Նրանցից ա-
մեն մեկը կարող եր յերկուական կլեպ-
սիդրա, այսինքն՝ կես ժամ խոսել: Առաջ
մեղադրողն եր խոսում: Նա ապացուցում
եր, վոր բոլոր ավագները Մարկոսին գեն
են: Սպանության համար նա մահվան պետք
է դատապարտվի: Մեղադրողը վերջացնում
է, Դատավորը Մարկոսին հարցնում է, թե
ինչ կարող ե ասել իր պաշտպանության
համար: Մարկոսը դժվարանում ե խոսել:
Մարսավից նըա լեզուն փակվում եր, յերբ
տեսնում եր կլեպսիդրից կաթիլ առ կա-
թիլ թափվող ջուրը: Յուրաքանչյուր կա-
թիլի հետ նվազում եր փրկության հույսը:
իսկ Յուլիոսը չկար ու չկար:

ել, յերբ ուզում ելին ասել, թե այսինչ
չի ճառը մի ամբողջ ժամ տևեց, ասում
ելին «Նրա ճառը չորս կլեպսիդրա աևեց»:

Մի ճառախոսի, վոր ժողովում հինգ
ժամ անընդհատ խոսել եր, վերջիվերջո
ալսպիսի մի հարցով են ընդհատում.

— Յեթե դու կարողանում ես այդքան
ժամանակ տանց շունչ առնելու խո-
սել, հապա քանի կլեպսիդրա կարող ես
լուել:

Ճառախոսը չի իմանում ինչ ասի և
ընդհանուր ծիծաղի հետ ապացուցում
ե, վոր ինքն ել կարող ե լուել:

Հին գրքերից մեկում յես մի մարդու
պատմություն եմ կարգացել, վորի կյանքը
փրկողը ջրի ժամացուցն ե յեղել:

Մի անգամ Հռոմ քաղաքում մարդա-
պանության մեջ մեղադրվող մի քաղա-
քացու դատում են: Նրա անունը Մարկոս
եր: Մի վկա յե միայն լինում՝ իր ընկեր
Յուլիոսը, վոր կարող եր նրան փրկել:

Բայց դատավարությունը վերջանում եր,
իսկ Յուլիոսը գեռեա չկար:

«Նրան ինչ ե պատահել, — մտածում եր
Մարկոսը: — Միթե նա բոլորովին չի դա-
լու»:

Որենքով՝ մեղադրողին, մեղադրյալին
ու դատավորին հավասար չափով ժամա-
նակ եր տրվում խոսելու: Նրանցից ա-
մեն մեկը կարող եր յերկուական կլեպ-
սիդրա, այսինքն՝ կես ժամ խոսել: Առաջ
մեղադրողն եր խոսում: Նա ապացուցում
եր, վոր բոլոր տվյալները Մարկոսին դեմ
են: Սպանության համար նա մահվան պետք
ե դատապարտվի: Մեղադրողը վերջացնում
ե: Դատավորը Մարկոսին հարցնում է, թե
ինչ կարող ե ասել իր պաշտպանության
համար: Մարկոսը դժվարունում ե խոսել:
Մարսավից նրա լեզուն փակվում եր, յերբ
տեսնում եր կլեպսիդրից կաթիլ առ կա-
թիլ թափվող ջուրը: Յուրաքանչյուր կա-
թիլի հետ նվազում եր փրկության հույսը:
իսկ Յուլիոսը չկար ու չկար:

Մի կլեպսիդրան արդեն վերջանում է,
մյուսն ե սկսվում: Բայց այստեղ մի հը-
րաշք ե պատահում: Կաթիլներն սկսում
են դանդաղել, ավելի դանդաղ են ընկ-
նում, քան առաջ:

Մարկոսի մեջ նորից ե հույս ծագում:
Նա պատմությունը դիտմամբ ձգձգում է՝



խոսում ե իր ազգականներից, թե բոլորն
ել ազնիվ մարդիկ են յեղել իր հորից,
պապից ու տատից: Նա արդեն սկսում ե
իր տատի հորեղբոր աղջկանից պատմել,
իերբ մեղագրողը, կունալով ժամացուցի
վրա, բացագանչում ե.

—ժամացուցի մեջ քար են քցել: Ահա
թե ինչու հանցագործը վոչ թե յերկու,
այլ առնվազն չորս կլեպսիդր ե խոսում:

Մարկոսը սփրինում է: Բայց հենց այդ
բովելին բազմությունը յետ ե քաշվում
ու Յուլիոսին ճանապարհ տալիս:

Մարկոսը փրկվում է:

Բայց ով եր կլեպսիդրի մեջ քար գցել:

Այս մասին այդ գրքում, վորից յես-
հանել եմ Մարկոսի ու Յուլիոսի պատ-
մությունը, վոչինչ չի ասված: Ի՞նչ եք
կարծում, դատավորն արած չլինի, վոր-
խղճում եր Մարկոսին:

ԱԼԵՔՍԱՆԴՐԻԱՅԻ ԺԱՄԱՑՈՒՅՆԵՐԸ

Այն ժամանակները, վորոնց մասին խո-
սում ենք, 2000 տարի առաջ, Յեղիպ-
տոսի Ալեքսանդրիա քաղաքն առանձնա-
պես հոչակվում եր ջրի ժամացուցների-
արտադրությամբ:

Առևտրական մի հարուստ քաղաք եր-
ալիք: Ասում ելին, վոր Ալեքսանդրիայում,

բացի ձյունից, ամեն ինչ կարելի յէ գըտնել: Այնուեղ, ըստ յերեվույթին, ծնունդ են առնում աշխարհում առաջին ժամագործական արհեստանոցները:

Ժամացույցի արտադրության գործը, վորով առաջ գիտնական գյուտարարներից շատ քչերն ելին պարապում, արհեստավորների ժամագործների՝ ձեռքն և անցնում: Այն ժամանակ նրանց «Առառածատարիա-կլեպսիդրատ» ելին առում: Այս անունը, վոր արտասանելն այնքան ել հեշտ չի, նշանակում եր՝ ինքնաշխատ ջրի ժամացույցի—ավտոմատիկ կլեպտիդրի վարպետ:

Այդ ի՞նչ ավտոմատիկ կամ, հայերեն ասած՝ ինքնաշխատ կլեպսիդր ե: Զե վոր այն կլեպսիդրը, վոր մեզ արդեն ծանոթ ե, ամենեվին ել ինքնաշխատ չեր: Այդ կլեպսիդրը գլխացավանք շատ ուներ:

Ալեքսանդրիայում ժամագործի արհեստանոց հիմնվելուց լեռկու հարյուր տարի առաջ այդ քաղաքում մի գյուտարար եր

ապրում, վորին հաջողվել եր մի նոր, շատ սրամիտ կերպով կառուցված ջրի ժամացույց հնարել:

Նրան կտեղիքի ելին կանչում: Նա մի սափրիչի վորդի յեր, բայց հոր արհեստն իր ճաշակով չեր և, փոխանակ Ալեքսանդրիայի քաղաքացիների յերեսը սափրելու, նա յեռանդուն կերպով պարապում եր գիտության ուսումնասիրությամբ մանավանդ մեխանիկայի:

Այնից շատ նա հետաքրքրվում եր այն մեքենաներով, վորոնց մեջ շարժիչ ուժը ջուրն եր: Զե վոր այն ժամանակ շոգու և կլեպտրականության ուժը դեռ չելին կարողանում բանեցներ, և միակ մեխանիկական շարժիչը ջուրն ու քամին ելին:

Ջրի թափվելը ջրաղացների անիվներին



եր ստիպում բանել, իսկ քամին հողմա-
դացների թևերն եր պլտտեցնում: Յեվ
ահա կտեղիբը մի միտք ե հղանում: Զի՞
կարելի արդյոք այնպիսի մի ջրի ժամա-
ցուց պատրաստել, վոր ինքնիրեն աշ-
խատի՝ ավտոմատ ջրի ժամացուց:
Կտեղիբը կառուցած ժամացուցը թերևս
մեր ժամացուցից խորիմաստ լիներ: Զի՞
վոր նրա անելիքն ել շատ ավելի բարդ
եր: Այնպիսի մի ժամացուց պետք ե կա-
ռուցեր, վոր ինքնիրեն լարվեր և թե ա-
մառն ու թե ձմեռը ժամանակը ճիշտ
ցուց տար: Զպետք ե մոռանանք, վոր
այն ժամանակ ժամի լերկարությունն
ամեն որ փոխվում եր: Կտեղիբն այս
բանը նկատի պետք ե ունենար:

Այն ժամացուցը, վոր կտեղիբն եր
դրել Արսինոե տաճարում, նկարված ե
այստեղ:

Այսունի վրա հոռմեական ու արաբա-
կան թվանշաններով ցուց են տրված
ժամերը: Հոռմեական թվանշանները գի-

շերվա ժամերն են ցուց տալիս, իսկ
արաբականը՝ ցերեկվա:

Ծիծաղելի ցիֆերբլատ ե, չե՞ Վոչ թե
մեր ցիֆերելատի պես կլոր, այլ ուղիղ եր:

Այդ ժամացուցի ոլաքը մի փոքրիկ
փայտ եր փոխարինում, վոր խողովակի
վրա կանգնած՝ թեավոր մի փոքրիկ տղա-
լեր ձեռքին բռնում: Խողովակը ժամա-
ցուցի միջից ինքնիրեն առաջ եր շարժ-
վում և տղային ներքեից կամաց-կամաց
բարձրացնում մինչև սյան գագաթը: Իսկ
տղայի հետ միասին շարժվում եր նաև
ոլաքը—նրա փայտիկը—և ցուց եր տա-
լիս ժամանակը: Ինքնըստինքյան պարզ
ե, վոր տղան ներքեից մինչև գագաթը
ուղիղ 24 ժամում եր բարձրանում: Այնու-
հետեւ տղան արագ ներքե եր ընկնում ու
հետո նորից սկսում դանդաղ վեր բար-
ձրանալ:


Բայց այս դեռ բավական չե: Այն ժա-
մանակ ժամացուցը տարվա տարբեր ժա-
մանակներին տարբեր մեծության եր լի-

նում: Ուստի և սյան վրա վոչ թե մի ցիֆերբլատ կար, այլ 12—ամեն ամսին իրենը: Սյունն ինքնիրեն կամաց-կամաց պատվում եր իր առանցքի շուրջն ու տղային մոտեցնում հենց այն ցիֆերբլատը, վոր հարկավոր եր:

Տեսնում եք, վոր ժամացուցը շատ սրամիտ է յեղել: Բայց ձեզ դժվար չի լինի նրա կառուցվածքից գլուխ հանել, յեթե դուք ուշադրությամբ կարդաք այն, ինչ հիմա յես պատճելու յեմ, և չեք մոռանա այն պատկերը, վորի վրա նկարված ե, թե ժամացուցի ներսն ինչպես է կառուցված յեղել:

Սյան մյուս յերեսին մի ուրիշ թևափոր տղայի կերպարանք եր դրված, վոր շարունակ աղի արցունք եր թափում, ըստ յերեվույթին ափսոսալով կորցրած ժամանակը:

Զրմուղից ջուրը թափվում եր նրա մեջ ու արցունքի պես դուրս գալիս աչքերից: Տղայի արցունքները կաթիլ-կաթիլ թափ-



վլում ելին իր վոտքերի առաջ և այստեղից հատուկ խողովակով գնում մի նեղ տուփի մեջ, վոր ուղղակի դրված եր մլուս տղայի տակ: Այդ տուփի մեջ դրված եր խցանից շինած մի լողան, իսկ լողանին ամը բացը բած եր հենց այն խողովակը, վորի վրա փայտիկավոր տղան եր կանգնած:

Տուփի մեջ ջուրը հավաքվելու հետ լողանը բարձրանում եր, ու նրա հետ ել՝ փայտիկավոր տղան: Հենց վոր տղան համանում եր գագաթն ու փայտիկի ծայրը կանդ եր առնում XII թվանշանի դիմաց, տուփի ջուրն արագ արագ դուրս եր գալիս II տասի ձեռվ պատրաստած ծնկածե խողովակով, լողանը ներքե եր ընկնում ու նրա հետ ել՝ տղան:

—Նոր ցերեկ եր սկսվում, ու տղան նորից եր սկսում իր ճանապարհորդությունը:

Նկարի վրա յել հենց պատկերված ե, թե ինչպես ե ջուրը դուրս գալիս ծընկածե խողովակից:

Դեռ պետք եւ պարզել, թե ի՞նչպես եր
կառուցված, վոր սյունն ինքն եր պարտ-
վում առանցքի շուրջը:

Ծնկածև խողովակից ջուրը թափվում
եր ջրաղացի անխվին, վորը, պատվելով,
ստիպում եր հենց նույն առանցքի վրա
տնկած փոքրիկ ատամնանխվին, կամ,
ինչպես ասում են, բանեցնող անխվը:

Բանեցնող անխվն իր ատամներով բըռ-
նում եր մյուս անխակի ատամներն ու
նրան ել ստիպում պտտվել: Խսկ այս ան-
վակն իր հերթին պտտեցնում եր յեր-
կըռդ բանեցնող անխվն, յերկըռդ բա-
նեցնող անխվն ել յերկըռդ ատամնավոր
անխվն եր պտտեցնում: Այսպես՝ չորս
ատամնանխվի ողնությամբ ջրաղացի ա-
նխվն ստիպում եր պտտվել առանցքին,
վորի վրա մի սյուն եր ածրացված:

Քսանչորս ժամը մի անգամ ծնկածև
խողովակից ջուրը թափվում եր փոքր ինչ
պտտեցնում ջրաղացի անխվը, վորից վո-
քըր ինչ պտտվում եր նաև սյունը: Մի

տարվա ընթացքում սյունը՝ կատարելաւը-
ջանառություն եր կատարում և մի տա-
րուց հետո ամեն ինչ նորից եր սկսվում:

Ինչպես տեսնում եք, մշտնջենավոր
ժամացուց եր ալդ, և, վորպեսզի բաներ,
բավական եր մի ջրմուզ: Ավտոմատ կոչու-
մը այս կեպսիդըին միանգամայն վայել
եր: Կտեղիբից հետո սկսում են ել ա-
վելի փորձված ու բարդ ժամացուց պատ-
րաստել: Որինակ՝ մի պատկեր ե մնացել
վորի վրա մի ջրաղաց և նկարված, վոր
մեր ջրաղացներից վոչ մի տարբերու-
թյուն չունի—կըր ցիֆերբլատով, պարտ-
վող սլաքով ու նույնիսկ քարոզ: Միայն
թե այս քարը մեր ժամացուցների քարի
պես ծանր չեր, վորովհետեւ վայտից եր:
Այս քարը լողանի պես լողում եր մի փոք-
րիկ ավազանի մեջ, վորից ջուրը շարու-
նակ շիթ-շիթ եր դուրս գալիս: Զրի
մակարդակն իջնելուն գուգընթաց, իջնում
եր նաև լողանը՝ շարժման մեջ դնելով
մեխանիզմը:

Ժամի բանին հ—3

«ՀԱԶԱՐ ՈՒ ՄԵԿ ԳԻՇԵՐ»-Ի
ԺԱՄԱՅՈՒՅՅԸ

Մինչդեռ Միջերկրական ծովի ափերին
— իտալիա, Հունաստան, Յեղիպտոս—
կրթված ժողովուրդներ են ապօռմ,
համարյա ամբողջ Յեվրոպան կիսավայ-
րենի վաշկառուններով եր բնակեցված:

Այժման Ֆրանսիայի կամ Գերմանիայի
.քնակիչները մի ժամանակ շատ քիչ բա-
նով են տարբերվել մոտ ժամանակներիս
մոնղոլներից:

Բայց ժամանակն իր անելիքն ա-
նում ե: Մոնղոլիայի տակաստաններում
ավտոմոբիլների շշակներն արդեն վախե-



ցնում են թափա-
մազ ուղարին.
տունդրաների գըլ-
խավերեր խորհըր-
դային սավառնակներն են բարձր սլա-
նում, վորոնք դեպի հյուսիս են թռչում:
Ալդաս ել հին ժամանակներում եր:

Գյուտաերը, սովորություններն ու կարգ
կանոնը Միջերկրական ծովի ափերից
կամաց-կամաց մուտք են գործել հյուսիս՝
«բարբարոս» կամ, ինչպես մենք ենք ա-
սում, հետամնաց ժողովուրդների զանդ-
վածի մեջ:

Նախքան առաջին կլեպսիդրի մուտքը
ֆրանսիա, կտեզիբի որից մոտ 700 տա-
րի յեր անցել: Մի ժամացուց եր այդ,
վոր իտալիայի թագավոր Թեոդորիսն եր
ուղարկել իր դրացուն ու դաշնակցին՝
Բուրգունդիայի թագավոր Գոնդեբոյին:

Թեոդորիս թագավորը, վոր իտալիայի
հյուսիսում գտնվող Խավեննա գեղեցիկ
քաղաքում եր ապրում, մի խելոք ու գիտ-
նական խորհրդական ուներ՝ Բոեցի ա-
նունով: Այս Բոեցին, բացի այդ, հմուտ
մեխանիկ եր: Թագավորի պատվերով նա
մի ժամացուց ե պատրաստում, վորը
վոչ միայն ժամանակն ե ցուց տալիս,
այլև լուսատուների շարժումը:

Այս բանը լսելով՝ Բուրգունդիայի թա-

դավոր Գոնդեբոն, վոր Լիոն քաղաքում
եր թագավորում, հրամացում ե մի նա-
մակ գըել Թեոդորիխին ու խնդրել, վոր
1) մի հատ արեի ժամացույց, 2) մի հատ
ջրի աշնակիսի ժամացույց ուղարկի իրեն,
վորոնք թե ժամանակը ցուց տան և թե
լուսատուների շարժումը:

Թեոդորիխի հրամանով Բոեցին մի շատ
վարպետորեն շինած ժամացույց ե պատ-
րաստում, վորը գրավոր բացատրականի
հետ Լիոն ե ուղարկվում՝ բացատրելով, թե
ժամացույցն ինչպես պետք ե բանեցնել:

Թեոդորիխի և Գոնդեբոնի նամակա-
դըրությունը մինչև մեր որերն ել մնացել ե:

Այս բանից հետո՝ ջրի ժամացույցը Թը-
րանսիալում գեռես յերկար ժամանակ շա-
րունակում եր մնալ իբրև մեծապես հազ-
վագլուտ բան: Այնտեղ չելին կարողա-
նում այդպիսի ժամացույց պատրաստել:
Այս կամ այն թագավորը հազվագեղ եր
կարողանում ջրի ժամացույցը նվեր ստա-

նալ հատակալից կամ արևելքից, ուր ժա-
մագործական արվեստը դեռևս պահպան-
վում եր:

Այսպես՝ օ61 թվին Պիպին կարճահա-
սակ թագավորը Հռոմի պապից ջըի, կամ,
ինչպես այն ժամանակ ելին ասում՝ «գի-
շերվա» մի ժամացույց ե նվեր ստանում:
Բայց ամենազարմանալին այն ժամա-
ցույցն եր, վոր հեքյաթալին Հարունալ-
Ռաշիդին եր հեռավոր Բաղդատից Ախեն
ուղարկել մյուս հեքյաթալին թագավորին՝
կառու Մեծին:

Թե մեկի և թե մյուսի մասին շատ հե-
քյաթներ, յերգեր բալլագներ են հյուս-
վել:

Մենք բոլորս ել տարկել ենք «Հազար
ու մի գիշեր»-ի պատմությամբ և հիշում
ենք խալիֆին, վոր հաճախ աղքատի շո-
րեր եր հազնում և իր վեզիրի հետ թա-
փառում Բաղդատի փողոցները:

Յեկ ահա այդ Հարուն ալ-Ռաշիդը Կառ-
լու Մեծին ջրի մի ժամացույց ե ուղար-

կում, վորն այն ժամանակի համար ար-
վեստի հղալիքն եր:

Կառլոս Մեծի բարեկամ և խորհրդա-
կան Եղինգարդն ալսպես և նկարագրում
ալր ժամացուցը.



Երից նրան մի քանի նվեր են մատուցում
և, ի միջի այլոց, վոսկեզոծ ու շատ վար-
պետորեն պատրաստված մի ժամացուց:
Հատուկ մեխանիզմը, վոր Ջրով եր բա-
նում, ցուց եր տալիս ժամերը: Յուրա-
քանչյուր ժամին զարկի ձախն եր լսվում:

Պղնձե մի քանի փոքրիկ գնդակ, որի-
նակ՝ ինչքան վոր պետք եր, ընկնում

«Պարսից թագա-
վորի դեսպան Աբ-
դալան և Յերու-
սաղեմացի յերկու
կուսակրոն ներկա-
յանում են կալարին:
Կուսակրոնները՝
Գեորգն ու Ֆելիքսը,
պարսից թագավոր-

իցին ժամացուցի պատվանդանի մոտ դըր-
ված պղնձե թասի մեջ: Դեպի ժամացուց-
ի ներաը տանող 12 դռնից յուրաքան-
չյուր ժամին մեկը բացվում ե : Կեսորին
բոլոր 12 դռնից 12 փոքրիկ ասպետ եր
դուրս գալիս ու հետեւից դուռը ծածկում:
Այստեղ զարմանալի ուրիշ շատ բան կար,
վոր մեր ֆրանսիացիք յերբեք ել չեն
տեսելք:

ԿՐԱԿԵ ԺԱՄԱՑՈՒՅՑ ՅԵՎ ԿՐԱԿԵ ԶԱՐԹՈՒԽՈՒԶ

Զրի ժամացուցը ֆրանսիայում և յեփ-
րոպական մյուս յերկրներում ել դեռ շատ
յերկար ժամանակ մնաց վորպես հազվա-
գյուտ բան: Կառլոս Մեծից յերեք հար-
ուուր տարի հետո ել հարուստ վանքե-
րում ու իշխանների պալատներում տեղ-
տեղ կարելի յեր խփող կլեպսիդր ճարել:
Բայց վանքերի մեծ մասը և գյուղերի ու
քաղաքների հայարլա վողջ բնակչությու-


նըն առաջվա պես առանց ժամացուցի
յեր անցկացնում:

Առանց ժամացուցի առանձնապես
կուսակրոնների բանն եր դժվար: Որն
ութ անգամ, յերեք ժամը մի անգամ,
վանքերի զանգակները կուսակրոններին
աղոթքի ելին կանչում: Առավոտան ժա-
մերգության աղոթքին յեկեղեցական
յերկրորդ ժամի (մեր հաշվով՝ առավոտ-
ան ժամի 7-ը, 8-ը և 9-ը) աղոթքներն
ելին հաջորդում, հետո՝ յերրորդ ժամինը
(մեր հաշվով՝ յերեկվա ժամի 10-ը, 11-ը,
և 12-ը) և այլն՝ ամբողջ որ ու գիշեր:


Պարզ է, վոր խեղճ ժամկոչի բանը
դժվար եր: Նա իր զանգակատնից շա-
րունակ մի գլուխ դուրս եր նայում, վոր
արևոյ կամ աստղերով ժամանակը վորոշի:

Բայց յեթե արև կամ աստղ չեր յերե-
վում, նա ստիպված եր լինում մեր հին
բարեկամ՝ կուսակրոն Ավգուստինի պես
անել—ժամանակը չափել կարդացած սաղ-
մուների թվով:

Ճիշտ ե՛ մի ուրիշ, ավե-
լի լավ միջոց ել կար: Ժա-
մանակը վորոշում ելին
ճրագի մեջ վառված ձեթի,
կամ վառված մեղրամոմի
շափով: Մի ժամանակ կրա-
կե ժամացուցներն այն
աստիճան գործածելի դար-
ձան, վոր այն հարցին, թե
«ժամի քանի՞սն ե», պա-
տասխանում ելին՝ «մի մոմ»
կամ «յերկու մոմ»: Գիշե-
րը յերեք մոմի ելին բա-
ժանում, և յեթե ասելիր,
թե հիմա յերկու մոմ ե,
միենույն ե, թե ասելիր՝
գիշերվա յերկու յերրորդն
անցել ե: Հարգի ելին նաև
ճրագներն ու գծիկների
բաժանված մոմերը, վորոնց
խազերը ժամերը ճիշտ հաշ-
վելու համար ելին:



Բայց այն ժամանակվա ձեթի ճրագները վառվում ելին անհավասար, մըուր տվող բոցով. մոմերը միահավասար հաստ չելին լինում։ Ուստի և ժամանակը չա-



փելու համար այդ ճրագներն անպետք ելին։ Այդ ճրագների հետ հաշտվելու պատճառն այն եր, վոր ուրիշ ժամացուց չըկար. անճարն ե կերել բունջարը։

Վանական կանոնադրություններից մի քանիսը, խելքին զոր տալով, ժամկոչներին ուղղակի խորհուրդ ելին տալիս գիշերն աքաղաղների կանչին ականջդնել:

Չինաստանում, ասում են, հենց այժմ իլ կրակե զարթուցիչներ են բանեցնում։ Թեփից ու խեժից ճիպոտ են պատրաստում ու դնում մի փոքրիկ մակույկի մեջ։ Մակույկի լայնությամբ պղնձե մի քանի փոքրիկ գնդակ ե թելով կախ տված։ Ճիպոտի մի ծալը վառում են։ Հենց վոր բոցը հանում ե թելին, թելն այրվում ե, ու գնդակները գնդալով ընկնում են մակույկի տակ դրված մետաղե ափսեկի մեջ։

Փարիզի քաղաքացիները լեկեղեցու զանդերով ելին իրենց որը դասավորում։


Կոշկակարները, պաստառագործները, մահուտագործներն ու հյուսակագործները լերեկոյան ժամերգության զանգը տալուն պես իրենց աշխատանքը վերջացնում ելին։

Հացթուխները մինչև առավոտյան զանգըն ելին թխում։

Հյուսներն իրենց աշխատանքը վերջաց-

Նուռ Ելին Նոտը Դամ յեկեղեցու մեծ
զանգը տալուն պես:

Ամառը յերեկոյան ժամի ութին, իսկ
ձմեռը՝ յոթին՝ զանգակներն ազդանշան



Ելին տալիս՝ կրակը հանգըռու։ Յեվ բու-
լորը ճրագներն ու մոմերն շտապով
հանգնուում - պառկում Ելին քնելու։

Հետաքրքրականն այն է, վոր այն ժա-
մանակները, յերբ մարդիկ դժվարութիւննք
Ելին ժամանակը վորոշում, յերբ մի ամ-
բողջ ժամ սխալվելը վոչ մի նշանակու-
թյուն չուներ, խորամանկ գիտունները

կլուխ Ելին ջարդում այն հարցի վրա, թե
ժամը քանի մասի պետք ե բաժանել։ Ո-
րինակ՝ մեկն առաջարկում եր ժամն այս-
պես բաժանել. 1 ժամը = 4 դուցայի =
15 մասի = 40 մոմենտի = 60 ըոպելի =
22560 ատոմի։



Մյուսը նրա հետ համաձայնության չեր
դալիս ու յենթաղըռում եր, վոր ժամն այս-
պես պետք ե բաժանել.

1 ժամը = 4 դոլլարի = 40 մոմենտի
= 480 ունցիայի = 5640 բողելի:

Այս բոլոր անմտությունները վաղուց
արդեն մոռացվել են: Միայն այն ժամա-
նակ, յերբ ծանրակավոր ու ճոճանակա-
վոր ժամացուցը լույս աշխարհ յեկավ,
հնարավոր դարձավ ժամը մասերի՝ բողե-
ների ու վայրկյանների բաժանել:




ՅԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

Բոլոր անկյուններում ցցված եյլն
ճենապակե հովքուհիներ ու սեղանի
ժամացուցներ, վոր պահծալի Լե-
ռուրի ձեռքի գործն եյլն, տուփեր, չա-
փերիզներ, հովհարներ ու կանացի
զանազան խաղալիքն ը, վոր Մոնդու-
ֆերովյան գնդի հետ անցյալ դարի
վերջին եյլն հնարդած:

ԽԱԶԱԿԻՐՆԵՐԻ ԱՎԱՐԾ (ԿՈՂՈՊՈՒՏ)

Ո՞վ ե հնարել ծանրակով ժամացուցը,
հայտնի չե: Բոտ յերևուզին այդ ժա-
մացուցն ա-
ռաջին անգամ
խաչակիրներն
են Պաղեստի-
նից բերել: Ինչ
պես չարուն
ալ-Ռաշիդի ո-
րով, արաբնե-
րը յեկըրոպացի-
ներից դեռևս ավելի հմուտու կրթվածելին:




Կերոններից սևացած՝ ասպետական
դղյակների ցուլու դահլիճներում, վորոնց
մեջ քամին պտտվում եր՝ ասես բաց դաշ-
տում, յերեան յեկան տաճկական գորգեր,
մետաքսե գործվածքներ, խալտարղետ
ծխամորձեր, Դամասկոսի զոլավոր պող-
պատից պատրաստած կեռ սրեր։ Յեկ
ասիական արս բոլոր պերճանքների հետ,
թերևս բերված ե յեղել նաև ծանրակով
ժամացուցը։

Համենայն դեպս հայտնի յե, վոր դեռ-
և 700 տարի առաջ սուլթան Սալահե-
դինն իր բարեկամին—Ֆրիդրիխ II կայ-
որին— վարպետորեն պատրաստած՝ ծան-
րակավոր մի ժամացուց ե նվիրում,

Այդ ժամացուցը 5000 դուկատ արժեր
—այն ժամանակի համար մի ոնց դու-
մար։

Դրանից հիսուն տարի հետո յելը ոպա-
լի մայրաքաղաքներից մեկում յերեվան
ե գալիս աշտարակի առաջին ժամացուց-
ըլ։



Եղվարդ 1 թագավորը հրամայում ե
լոնդոնի պառամենտի շենքի գլխավերել՝
Վեստմինստերի աշտարակին մի մեծ ժա-
մացուց դնել։ Քառակուսի ու բարձրա-
բերձ մի աշտարակ ե ալիդ, վորի սրածալը
գմբեթը վեհորեն բարձրանում ե շըր-
ջապատի բոլոր շենքերի գլխավերել, ինչ-
պես հսկան՝ թզուկների գլխավերել։

360 աստիճան ճանապարհ ե մինչե
Մեծ Տոմը — այսպես ելին անվանում անգ-
լիացիներն իրենց առաջին ժամացուցը։

Չորս գար անընդհատ Մեծ Տոմն ա-
ռանց հոգնելու խփում եր ժամանակը։
Լոնդոնի մառախլապատ որերին հին աշ-
տարակը, ինչպես փարոսը՝ մառախլապատ
ծովի մեջ տեղը, իր խուլ ու տագնապա-
լից ազդանշաններն եր տարածում ամեն
կողմ։

— Ժամանակն անցնում ե, շտապեցեք,
շտապեցեք, շտապեցեք։

Յեվ ալս մռայլ ձախին ականջ դնելով՝
գիսակ (պարիկ) ու քղամիդ հագած և

ներքնուու բազմած պառլամենտի անդամները, թերես, սագի փետուրը մի ըոպէ յետ եցին դնում ու մտաքերում այն, ինչ առեն տեսակի հարկերից, տուրքերից ու մաքսերից կարեռն եր:

Հետո Մեծ Տոմի տեղ մի ուրիշ ժամացուց՝ Մեծ Բննն ե գրավում: Բայց վերջինիս մասին մենք հետո ել կարող ենք խոսել:

Լոնդոնից հետո շուտով ուրիշ քաղաքներում ել են աշտարակի ժամացուցներ լերեան գալիս:

Ֆրանսիայի թագավոր Կառլոս V ը՝ ժամագործ Հենրիխ գե—Վիկին Գերմանիայից բերել ե տալիս ու պատվիրուու ե Փարիզում՝ արքայական աշտարակին մի ժամացուց դնել: Գերմանացի վարպետը ժամացուցը կառուցելու վրա ութ տարի յե աշխատում: Այնուհետև, ժամացուցին հոգ տանելու համար, նրան ուրական վեց սու ոսմիկ ե նշանակվում ու բնակարան հատկացվում հենց նույն աշտարակում, վորտեղ ժամացուցն եր:

Մի քանի տարուց հետո մի ուրիշ վարպետ—այս անգամ Ֆրանսիացի ժան Ժուլիանն ե արքայական գլուխերից մեկի համար մի ժամացուց պատրաստում: Այս ժամացուցի վրա գրված ե,

Փրանսիայի թագավոր Կառլոս V ժամացուվանի ոգնուրքամբ ինձ Կանգնեցրել ե հազար յերեք հարյուր ուրսուն բիթն:

Ժան Ժուլիանու և Հենրիխ գե-Վիկիկ—ահավասիկ առաջին ժամագործներից այն ակավաթիկ մարդիկ, վորոնց անունները մինչեւ մեր որերն են հասել:


Մուսաստանում աշտարակի առաջին ժամացուցը 1624 թ. ե ղրված լեզել Կրեմլի աշտարակներից մեկին: Այժմ այդ տեղուն Սպասուկի աշտարակն ե կանգնած:

ԺԱՄԱՑՈՒՅՑՆ ՈՒ ԶՐԸՈՒՅՑ

Մեզնից շատերին մանկական վոքք հասակում ժամացուցը կենդանի բան եր թվում: Ականջ ես դնում, ասեա՞նրա մեջ

քո սիրտն ե բաբախում, իսկ խուփը բարձրացնելիս ալդ բազմաթիվ անիվների ու անվակների փայլկտելուց աչքերդ շանում են։ Իսկական գործարան։

Յեվ ալդ բոլոր փութկոտ աշխատանքն



այն պատճառով ե միայն,
վոր յերկու փոքրիկ ծույրան՝ ժամ և
րոպե նշող սըլաքները տե-

ղից շարժվեն, վորոնք, առաջին հայացքից,
չեն ել մտածում շարժվել։

Յուրաքանչյուր գործարան շարժիչ—
շոքեմեքենա, դիզել կամ նման մի բան ունի, վոր բոլոր բանող մեքենաները շարժման մեջ ե դնում։ Այսպիսի մի շարժիչ ել ժամացուցիչ մեջ պետք ե լինի—չե՞ վոր ժամացուցն իսկապես կենդանի չի։

Մեր ժամացուցների մեջ շարժիչը զըսպանակն ե։

Հին ժամանակների ժամացուցիչ մեջ շարժիչը ծանրակն եր։ Ալդ ժամացուցներից հենց հիմա ել շատ կա։

Դուք յերբեմեջ չարխով ջրհոր տեսել եք։ Զարխը մի գլան ե՝ վրան պարան փաթաթած. պարանի մի ծայրը գլանին ե ամրացրած, իսկ մյուսին մի դուզլ ե կապած։ Զարխի կուռը պտտացնելով՝ դուք ջրով դուզլը վեր եք բարձրացնում։ Բայց բավական ե՝ դժվարութիւնը բարձրացրած ալդ դուզլը բաց թողնել, և նա զնդակի պես ներքեւ կնետվի՝ պարանը լետ տալով և գլանին ու կոանն ստիպելով կատաղի պտույտներ անել։

Լավ կանեք, վոր ալդ ըռպեցին յետ քաշվեք, թե չե՞ չարխի կուռն առանց ալկալութիւն կխփի ձեր ձեռքին։

Թերես ծանրակով ժամացուցիչ հնարողին հենց չարխով ջրհորն ել որինակ լեղած լինի։ Դուզլը ծանրակի տապավորութիւն ե թողնում, իսկ պտտվող կուռը՝ սլաքի։

Բայց բաց թողնված դուզլը հորի մեջ հսկայական, ավելի ու ավելի մեծացող արագությամբ ե ցած թոշում. կուռն այնքան արագ ե պտտվում, վոր պտույտները համբել չի լինում:

Իսկ ժամացուցի մեջ սլաքները դանդաղ պետք ե պտտվեն: Նույնիսկ վայրկենասլաքն ել շատ արագ չի պտտվում, բայց չե վոր մենք վայրկյաններ չպետք ե չափենք, այլ ժամեր: Բացի այդ, սլաքը հավասարաշափ պետք ե շարժվի, և վոչ թե չարխի կուռն պես, վոր քանի գնում, այնքան շուտ-շուտ ե պտտվում:

Ահավասիկ վողջ դժվարությունը: Պետք եր այնպիսի մի հարմարանք հնարել, վորը կարողանար յետ պահել պարանի քանդվելն ու ծանրակի ցած նետվելը և, բացի այդ, գլանի պտտոցը հավասարաշափ դարձնել: Այս հարմարանքը — ուղղորդակը, վոր ժամացուցի բանելը կանոնավորում, ճշտում ե — բոլոր ժամացուցներն ել ունեն: Բայց չե վոր

զապանակավոր ժամացուցի մեջ ել ուղղորդակն անհրաժեշտ ե: Յեթե զլած՝ սեղմած զապանակը բաց թողնենք, վայրկենապես կքանդվի, և ժամացուցն իսկույն կկանգնի: Զսպանակի քանդվելն ել դանդող ու հավասարաշափ պետք ե լինի:


ՄԻ ՔԱՆԻ ԽՈՍՔ ԵԼ ՆԱՊԱՍՏԱԿՆԵՐԻ

ՄԱՍԻՆ

Վորպեսզի կարողանաք հասկանալ, թե հնադարյան ժամացուցի կանոնավորիչն ինչպիս ե պատրաստված յեղել, դուք պետք ե մտաբերեք նևայի վրա փոքրիկ նավով կատարած ձեր զբոսանքը: Նավահանգիստ մտնելիս, յեթե չեք մոռացել, պտուտանը կամ տուռնիկետը ձեր դեմը կտրում ելին: Այս մի հարմարանք ե, վոր ճանապարհորդներին թուլլ չի տալիս բազմությամբ խուժել նավահանգիստը, այլ նրանց ստիպում ե մեկ-մեկ մտնել: Ալդպիսի պտուտաններ ել հասարակական այդիների մուտքի մոտ են

դնում, վոր նապաստակ բռնելը հարմար լինի, իհարկե, վոչ թե չորքոտանի, այլ յերկոտանի նապաստակ:

Տուռնիկետից անցնելիս դուք այն առաջ եք մղում. տուռնիկետը պտույտ և գալիս ու կտրում ձեր հետեւից յեկողի ճանապարհը:



Յերվակալեք, թե քարը ցած իջնելով ստիպում ե, վոր վոչ միայն գլանը պտըտվի, այլև անիվին միացած ատամնանվակը:

Դժվար չի ալի անել. մենք հետո կտեսնենք, թե ինչպես պետք ե պատրաստել ալի:

Մենք մի կերպ պետք ե պահենք, արգելակենք ալի անվակի պտույտ գալը. Ուստի և մենք անվակի ատամներն ել այնպես պետք ե պահենք, ինչպես պտուտանն ե այգի մտնողների դեմք կտրում:


Պատկերի վրա այս անվակը նկարված ե: Պտուտան — կամ ուղղորդակ — ասածդ յերկթի մի առանցք ե: Այս ըոպելիս վերին թին կանգ ե առել վերին յերկու ատամի արանքում: Այն ատամը, վորին թին առաջ ե մղում: Այս պատճառով առանցքը կես պտույտ ե կատարում ու ցածի թին կանգ ե առնում ցածի յերկու ատամի արանքում: Այսպես ել գործը շարունակվում ե: Բայց վորպեսզի անվակն այնքան ել հեշտ չկարողանա պտուտանը պըտտել, առանցքի վերին ծալրին յերկբեռնանի մի չորսու յե անցկացրած:

Յեթե մենք ուղղորդակ դրած չլինելինք, քարը ցած կընկներ։ Բայց վերջինս ստիպելով բեռնավոր չորսուն պըտտեցնել՝ մենք քարին այնպիսի մի գործի լենք դրել, վոր դանդաղ ու հավասարաշափ՝ թեթև հարվածներով պետք եցած իջնի։

Այժմ կարող ենք ժամացուցը սարած վիճակում քննության առնել։ Դուք, իհարկե, այստեղ կճանաչեք թե քարը, թե դլանը, թե պտուտանավոր անիվը (անվակը կոչվում ե իջեցնող կամ բանող անվակ, իսկ՝ պտուտանը՝ ճոճան)։ Զախից ոլաքն ե նկարված։ Ցիֆերբլատը կողքից ելերեվում, այս պատճառով ել թվանշանները նկարված չեն։

Գլանը պտտվելով, վողջ մեխանիզմը՝ թե ոլաքը և թե կանոնավորիչը շարժման մեջ ե դնում։ Շարժումների համար յերկու զույգ ատամնանիվ ե դրված։ Զախից մի զույգը (բանեցնող անիվն ու անվակը) շարժումը հաղորդում ե ոլաքին,

իսկ աջից մյուս զույգն իջեցնող անվակի առանցքին ե ստիպում պտտվել։



Առաջին ժամացուցը, համեմատած հետո պատրաստվածների հետ, շատ պարզ ու կոպիտ եր շինված, դրա համար ել ժամանակը շատ սխալ եր ցույց տալիս։ Նախ և առաջ այդ ժամացուցը մի ոլաք ու-

ներ ժամանիշ սլաք, և որական մի քանի անգամ պետք ե լարվեր: Հենց այդ եր պատճառը, վոր Հենրիխ դե-Վիկն ստիպված եր ժամացուցցավոր աշտարակում ապրել, վորովհետև այդ ժամացուցը կամակոր եր, և ստիպված ելին աչքից բաց չթողնել: Ցիֆերբլատի թվանշանները ցուց ելին տալիս 1-ցի մինչև 24-ը և վոչ թե մեր ժամացուցի պես մինչև 12-ը: Այդ ժամացուցը մի անգամ արևվը մայր մըտնելուց հետո յեր խփում, 24 անգամ ել՝ մըլու որը մայրամուտին:

Հին ժամանակներն որվա սկիզբը վոչ թե հիմիկվա պես կես գիշերն եր համարվում, այլ արեւը մայր մտնելու ժամանակը:

Շատ հետո յեն միայն սկսում ցիֆերբլատի վրա նշաններ անել, 1-ից մինչև 12 թվանշանը յերկու անգամ կրկնելով ցերեկվա և գիշերվա համար: Բայց կարճ ժամանակից հետո սկսեցին ժամացուցը մեր հաշվի համաձայն պատրաստել:

Հետաքրքրականն այն է, վոր հիմա նո-

րից են սկսել ժամը հաշվել 0-ից մինչև 24-ը: Բանակում ու յերկաթուղում այս հաշվը վաղուց արդեն ընդունված եւ: Ճիշտ ե՞ն մեծ մասը դեռևս գերադասում է ասել՝ «Գիշերվա ժամի մեկին կես ե ուղում», փոխանակ ասելու «զերո յերեսուն», կամ՝ «ցերեկոյան ժամի տասնմեկըն ե», փոխանակ կարճ ասելու՝ «ժամի 23-ն ե»:

ՄԵԾ ՏՈՄԻ ԿԱՏԱԿՐ

Իմ սենյակում կախ տված պատի ժամացուցը սիրում ե յերեմն կատակներ անել: Որինակ՝ այսոր կեսորին վոչ թե տասներեկու, այլ տասնչորս խփեց:

Յեթե վարպետորեն պատրաստած մեր ժամացուցին այսպիսի բան ե պատճում, ել ի՞նչ կարող ենք ասել այն ժամացուցների մասին, վոր մեր նախնիքներին ելին սպասարկում:

Մի անգամ այսպիսի մի չարաճճիություն ե անում Վեստմինստերի մեծ Տո-

մը, հավանորեն՝ մո-
ռանալով, վոր ինքը
փոքր Տոմը չե։

Ճիշտ ե՝ այս չա-
րաձնությունը մեկի
կյանքը փրկում ե։

Այսպես ե լինում։
Ժամապահը կան-
գնած ե լինում
Լոնդոնի արքայա-
կան պալատի առաջ։
Հրացանին հենված՝
նա մտածում ե, վոր
գիշերը ցուրտ ու
մառախլապատ ե և
իրեն դեռ շուտ չեն
փոխելու։ Հանկարծ՝
նրա ականջին խուլ
ձայներ են հանսում։
Նա գլուխը բարձ-
րացնում ու սկսում
ե ականջ դնել՝ աշ-
քերը հառած մթու-



թլան մեջ։ Այն ժամանակ փողոցները չելին
լուսավորվում և դժվար եր բան տես-
նել։ Ժամապահը պալատի լերկարությանը
մի քանի քայլ ե անում, բայց աղմուկն
ալիս չի կրկնվում։ Այդ ժամանակ Վեստ-
մինստերի աշտարակի ժամացուցը խը-
փում ե։

Մեծ Տոմը մեր հրացանավորի բարեկամն
ե լինում։ Մեծ Տոմի զանգի հարվածներն
ասես կլճատում են ժամանակը, վոր
սպանիչ կերպով դանդաղ եր անցնում։
Ժամապահն սկսում է հարվածները հաւ-
րել, հրացանի կրթի թխկոցներով։ Այս
անգամ Մեծ Տոմը կատակելու տրամա-
դըրություն ե ունենում—12 հարվածին
տասներեքերորդն ել ե ավելացնում։

Մյուս որը ժամապահին ձերբակալում
են։ Բանից դուրս ե գալիս, վոր նախորդ
որը կես գիշերին թագուհու ննջարանից
թանկագին մանյակներ են գողացած լի-
նում։ Մեր բարեկամին մեղադրում ելին,
վոր նա պահակատեղում քնել ե և չի լսել,
ժամի բանիսն և—⁴


թե զողերն ինչպես են մտել սկավառը:
Խեղճի բանը վաստ կլիներ, լեթե չհա-
ջողվեր ապացուցել, վոր կիս զիշերին
ինքը քնած չի լեղել: Բայց, բարեբախ-
տաբար, նա ժամանակին կարողանում է
հիշել Մեծ Տոմի 13 հարվածը: Ուզար-
կում են Վեստմինստերի աշտարակում
ապրող ժամագործի հետեից: Նա հաստա-
տում է, վոր ժամի 12-ին ժամացուցն
խկապես 13 անդամ է խփել Այս ապա-
ցուցի դեմ վոչ մի առարկություն չեր
կարող լինել, և հրացանավորին աղա-
տում են:

**Ալսոլես Մեծ Տոմի իր բարեկամին
Փրկեց:**

ՆՅՈՒՐՆԲԵՐԴԻ ԶՎԵՐՆ ՈՒ ԻՐԵՆՑԻՑ ԴՈՒՐՍ ՅԵԿԱԾԲ.

Դուք ուշադրություն դարձել եք ար-
դյոք, վոր իրերն աճում են: Յերկուհար-
յուր տարի առաջ յիրեք հարկանի տունը
հաղվագյուտ բան եր, իսկ հիմա Ամե-

րիկալում հարյուր հարկանի, նույնիսկ ա-
վելի բարձր տներ են շինում: Նախկին
նավակն ալժմյան ովկիանոսալին տիտան-
ների հետ համեմատած թզուկ եր, Որինակ-
ներ, վորքան ուղեք, կարելի լե գտնել:



Ժամացուցի բանն ընդհակառակն եր:
Առաջին մեխանիկական ժամացուցն աշ-
տարակի հսկայական ժամացուցն եր,

վորի ծանրակները մի քանի տասնյակ
փութ ելին քաշում։ Մինչև վոր ժամա-
ցուցը պատի, սեղանի ու գրպանի ժա-
մացուցի փոխվեց, շատ տարիներ անցան։

Մեծ Տոմն արդեն յերկու հարյուր տարե-
կան եր, յերբ ֆրանսիայի թաղավոր Լյուդ-
վիդ XI-ի հրամանով պատրաստվում ե-
առաջին շարժական ժամացուցը։ Այդ ժա-
մացույցն այնքան ել փոքրիկ չեր, բայց
համենայն դեպս գրպանի ել չեր։ Թա-
դավորի ճանապարհորդության ժամա-
նակ ժամացուց պարունակող արկղը ձիուն
ելին բարձում։ Հասուկ ձիապան Մար-
տին չերեն որական հինգ սուով պետք
ե խնամեր ձին ու արկղը։ Ըստ յերեսու-
թին նա թե մեկ և թե մյուս մասից ել
վարպետ եր։ Հետաքրքրական ե՝ նա իր
պարտականությունները չեր շփոթում
արդյոք, և յերբեմն չեր փորձում ժամա-
ցուցին գարի տալ կամ ձին լարել։

Մոտավորապես 1500 թվին յերեսան
յեկավ գրպանի ժամացուցը, վորի հնա-

100

լողը Գերմանացի Նյուրնբերգ քաղաքացի
Պետեր Հենլեյն անունով մի ժամագործ
եր։ Ասում են, վոր նա հենց մանկական
հասակից իր ընդունակությունով զարմաց-
նում եր բոլորին։ Եեվ իսկապես՝ խնդիրը
շատ ընդունակ մարդու ուժի բան եր։

Ամենամեծ դժվարությունն այն եր,
վոր ժանրակը մի վորեւ ուրիշ շարժի-
չով փոխարինվեր։ Պետեր Հենլեյնն այս
բանի համար զսպանակ ե հարմարեցնում։

Զսպանակի գլխավոր հատկությունը
կամակարությունն ե։ Ինչպես ել վոլորե-
լու լինեք, զսպանակը պետք ե աշխատի
քանդվել։ Պետեր Հենլեյնը վորոշում ե
հենց այս հատկությունից ել ոգտվել։

Գրպանի ժամացուցի խորքում արույ-
րից պատրաստած, կոր ու տափակ մի
փոքրիկ տուփ ե պահված։

Այդ «թմբուկն» ե—այն տունը, վորի
մեջ ժամացուցի շարժիչը՝ զսպանակն ե
տեղավորվում։ Զսպանակի մի ծալը,
ներսինը՝ շարժական չի, բայց ամրաց-

191

ված ե առանցքին, վորի վրա թմբուկն ե դրված։ Մյուս՝ դրսի ծալըն ամրացված ե թմբուկի պատին։

Ժամացույցը լարելու համար՝ մենք թմբուկը պտտեցնում ենք և այսպիսով վլորում զսպանակը, իսկ դրսի ծալընին ստիպում ենք շրջաններ անել։ Բայց հենց վոր մենք զսպանակը թողնում ենք իրեն կամքին, այն սկսում ե քանդվել, դրսի ծալըը վերադառնում ե նախակին տեղը, և միաժամանակ թմբուկն ել նույնքան հետադարձ պտույտ ե կատարում, վորքան սկզբից դեպի առաջ եր արել։

Ահա և ամբողջ գաղտնիքը։


Մի քանի առամմանվակ թմբուկի պըտույտները հաղորդում են սլաքներին նույն ձևով, ինչպես ծանրակով ժամացույցի ձեչ։

Զսպանակի քանդվելը դանդաղեցնելու համար Պետր Հենլեյնն ողտովում ե




նույնապիսի ձոճանով, վոր ուեծ ժամացույց ների մեջ եցին դնում։

Նկարը ցույց է տալիս յերկաթե մի ժամացույց, վոր հավանորեն ինքը՝ Պետր Հենլեյնն եր պատրաստել։ Ժամա-



ցույցի հետեւի խուփը հանված ե; և մեխանիզմը կարելի յելավ տեսնել։ Աջից առամմանիվն ե, վոր հազցված ե միկոնույն առանցքին, վորի վրա նաև թրմ-

բուլին եւ Թմբուկը՝ ատամնանվի տակ եւ
Այս ատամնանիվը ժամացուցը լարելու
համար եւ Բանալին հազցնում են փոք-
րիկ անվակի քառանկյունի առանցքին ու
պատեցնում, անվակն ել իր հերթին մեծ
անխին ու թմբուկին եպտտեցնում: Մյուս
անխիները, վոր շարժումը հաղորդում են
սլաքներին, պահված են մեխանիզմի ներ-
սի մասը մեղնից ծածկող թիթեղի տակ:
Զախից փոքրիկ ճոճանն ե՝ լերկու փոք-



րիկ բեռով, ինչպես վոր մեծ ժամացուց-
ների միջի բեռնավոր ճոճանն ելինում:

Սլաքը միայն մի հատ եւ ժամացուցն
ապակի չուներ: Յուրաքանչյուր թվանը-
շանի վրա բշտիկ կար, վորպեսզի կարե-
լի լիներ մթության մեջ շոշափել և իմա-
նալ, թե ժամի քանին եւ
Բշտիկները նաև հարկավոր ելին ահա
թե ինչի համար: Հին ժամանակները մեծ
անքաղաքավարություն եր համարվում
հյուր գնացած ժամանակ ժամա-
ցուցին մտիկ տալը: Յեթե ժամացուց-
յին նալելու լինելիք, տանտերերը կարող
ելին կարծել, թե դուք իրենցից ձանձ-
րացել եք: Ուստի, յերբ հյուրը պատրաստ-
վում եր գնալու, ձեռքը տանում եր իր
կուռափիկի գրպանը և թագուն շոշափում
սլաքն ու վերջինիս մոտի բշտիկը:


Ժամացուցի ապակին լուս աշխարհ
յեկավ գրպանի ժամացուցի հայտնաբե-
րությունից հարյուր տարի հետո միայն
1700 թ. մոտերքը յերեան յեկավ ըո-
պելաւաքը: Իսկ վայրկենապաքը ծնունդ
առավ միայն 1760 թ: Ուրեմն՝ նշանա-
կում ե յերեք քուլը սլաքներից ամենա-
ավագը՝ ժամասլաքն ե, ամենակրտսերը՝
վալրկենապաքը:

Այսպես եր ժամացուցը փոխիսվում դարից դար անցնելով: Ժամացուցի ամեն մի մանրամասնություն իր պատմությունն ունի: Որինակ, վեր առնենք հենց ժամացուցի գլուխը: Սկզբից այդ գլուխը միմիայն կախ տալու գործին եր ծառայում, իսկ ժամացուցը վոչ թե գըլ խով ելին լարում, ալ բանալիով:

Աշխարհում ամեն ինչ փոխվում է: Փոխվում եր նաև ժամացուցը: Հին ժամանակներն ուղիղ ժամացուց չկար վոչ թե այն պատճառով, վոր գեռ հնարյած չեր, ալ այն պատճառով, վոր ժամացուցի կարիք չկար: XIV—XV դարերում մարդիկ հազվագետ ելին ճանապարհորդում, վորովհետև լավ ճանապարհ, լավ կառք չըշկար: Քաղաքները լուռ ու անմարդ ելին, հազվագույտ դեպքերուն տոնավաճառն եր միայն կենդանություն տալիս քաղաքի հըրապարակին: Յերկրեցերկիր թափառող վաճառականները շրջում ելին կալվածատերերի կալվածքները՝ վաճառելով Ասիա-


լից տարած համեմունքները, ներկերն ու դեղախոտերը: Հեռավոր յերկրներից ապրանքն ամիսներով և նույնիսկ տարիներով ելին կրում: Մարդիկ ապրում ելին առանց շտապելու, առանց հաշվի և առանց նկատի առնելու իրենց ժամանակը: Դրա համար ել գրպանի նախնական ժամացուցը այնքան ժամանակը չափելու համար գործիք չեր հաշվը վում, վորքան վոր գեղեցիկ ու թանկագին խաղալիք եր:

Բայց ժամանակն անցնում եր ու կյանքը փոխվում: Աճում ու զարգանում ե նաև տունառերը: Նավերն ավելի ու ավելի հաճախ են լողալու գուրս գալիս՝ անդըժովան ապրանքներ բերելու համար:




Դեպի Հնդկաստան ծովալին ճանապահն առաջը գույնութելով՝ ծովագնաց վաճառականները հասարակածին են համառում, Աֆրիկայի շուրջը պատվում, Ամերիկան գտնում, հետքաթավին Մեքսիկա մտնում: Գտնելուն պես նոր չերկրներից Յեվրոպա էն ճանապահն վում վոսկի, արծաթ, պղպեղ, մեխիսկ ու սուրճ բարձած նավատորմիղներ: Աֆրիկայում սկսվում ե. նեղրերի վորոց: Սևամորթ սարուկներին հաղարներով տառում են Ամերիկայի տնկարանները:

Նավաշինարաններում մուրճերն ել ավելի ուժգին են շառաչում: Քաղաքների միջև նոր ճանապահներ են բացվում: Քաղաքներն ել են փոխվում: Խանութների ցուցափեղկերը զարդարվում են: Արհեստավորների փոքրիկ արհեստանոցների կողքին մանուֆակտուրալի մեծ արհեստանոցներ են ծնունդ առնում՝ տասնկակ ու հարլուրավոր բանվորներով: Յեփ, վերջապես, սկսում են պատվել անդրանիկ սեքենաների գլանները:




միմիայն ժամասլաքն ել բավական եր, XVIII դարում վերջինս վոչոքի այլև չեր բավարարում: Յեփ ահա ծնունդ և առնում ըստեա-

Այսպես եր կյանքը փոխվում չորս դար շարունակ՝ դառնալով ավելի փութեկոտ, աղմկալից ու գործունչա: Մարդիկ ավելի ու ավելի ելին սովորում թանկ գնահատելիքնց ժամանակը: Յեթև XV դարում



ոլաքը, հետո ել՝ վայրկենասլաքը: Ժամացուցը դադարում է խաղալիք լինելուց ու դառնում է ամենաանհրաժեշտ և ոգտավետ բաներից մեկը: Վոչ մի նաև



առանց քրոնոմետրի ծով գուրս չի գալիս, վոչ մի գնացք առանց չվացուցակի ճանապարհ չի ընկնում, վոչ մի գործարան առանց ժամանակը ճիշտ դասավորելու չի աշխատում: Ժամացուցին առանձնապես անհրաժեշտ է մեր յերկրում, վոր շարունակ պլանով ուցուցակով եալ աշխատում: Դեռ մոտերքս ել գրեթե մեր

ամբողջ յերկիրը վոչ թե ժամացուցով եր ապրում, այլ արևով: Ֆյուզում ժամացուցը հազվագյուտ բան եր: Սեփական ժամագործարաններ չունելինք: Այժմ յերկիրը փոխվել է: Ժամացուցը վոչ միայն

քաղաքին և հարկավոր, այլև զյուղին, վոչ միայն գործարանին, այլև կոլտնտեսությանը: Ուստի և հենց առաջին հնդամյակում ԽՍՀՄ սկսվում է ժամացուցի գործարանացին արտադրությունը:

Առաջին գրպանի ժամացուցը կոչվում է «Նյուրնբերգյան ձու», թեև, իսկապես ասած, այդ ժամացուցը, վոչ թե ձվածե եր, այլ կլոր տուփի ձև ուներ: Բայց շատ շուտով սկսում են ժամացուցին ամեն տեսակի ձև տալ:

Այդ ձևերի մեջ կտեսնելիք և աստղ, և թիթեռ, և գիրք, և սիրա, և շուշան, և կաղին, և խաչ, և մեռած դլուխ, մի խոսքով՝ ի՞նչ ուզեք: Այդ ժամացուցը զարդարված եր լինում մանրանկարով, եմալով և թանկագին քարելով:

Այսպիսի գեղեցիկ խաղալիքներն ափսոս եր գրպանում պահել, ուստի և սկսցին վզները զցել կրծքին և նույնիսկ փորի վրա կախ տալ:

Վորոշ պճառակիներ ել յերկու ժամա-


ցուց Ելին կրում՝ վոսկե և արծաթե, վոր
բոլորն ել տեսնելին, թե նա վնրքան



հարուստ եւ ժամանակա-
ցուցը դրպանում
պահելն սկսեց ան-
քաղաքավարություն

համարվել:

Ժամագործներն իրենց արհեստի մեջ
այնքան ճարակացան, վոր կարողանում
ելին բոլորովին փոքրիկ ժամացուցներ



պատրաստել, վորոնք ականջողի կամ
մատանեքարի տեղ ելին բանեցնում:
Դանիալի թագուհին, վոր Անդիալի

թագավոր Յակոբ Լի հետ եր ամուսնա-
ցել, մի մատանի ուներ, վորի վրա ժա-
մացուց եր դրված: Այս պստիկ ժամա-
ցուցը ժամանակը խփում եր, բայց վոչ
թե զանգակով, այլ փոքրիկ մուրճով, վո-
րը կամացուկ խփում եր մատին:



Զարմանալի լեր, թե ինչ հրաշալի բա-
ներ ելին դուրս դալիս նյուրնբերդքան
ձվերից: Ի՞նչպիսի արվեստ եր հարկա-
վոր, վոր արվածիսի մի մատանի շինվեր:
Չե վոր այն ժամանակ ամբողջ աշխա-
տանքը ձեռքով եր կատարվում: Հիմա,
լերը ժամացուցը մեքենայով ե պատ-

ըաստվում վարպետները միայն մեքենա-
յով պատրաստած առանձին մասերն են
սարում։ Նրանք իրենց տրամադրության
տակ ամեն տեսակի շրջատաշ հաստոցիկ-
ներ, ատամ հանելու մեքենաներ և այլ
բաներ ունեն։ Իզուր չի, վոր ժամացուցը
հիմա եժան և ու բոլորին մատչելի։ Բայց
այն ժամանակները, վորոնց մասին մենք
խոսում ենք, փոքրիշատե լավ ժամացուցը
պատրաստելը հեշտ բան չեր, և ժամա-
ցուցը շատ թանգ արժեր։ Իզուր չեր,
վոր թագավորներն իրենց պալատական-
ներին ժամացուց ելին նվիրում, յերբ
ուզում ելին նրանց պարզեատրած լինել։
Ֆրանսիայում, հեղափոխության ժամա-
նակ, բժիշկներից, դեղագործներից ու
պալատական մատակարարողներից շատե-
րն աշխատում ելին մի կերպ ազատվել
արքայական ալդ նվերներից, վորոնց հա-
մար գլուխը կարելի յեր դներ

ՀԵՐՑՈԳՆ ՈՒ ԳՐՊԱՆԱՀԱՏԸ

Մի անգամ, ընդունելության կամ, ինչ-
պես այն ժամանակ ելին ասում։ «Պուրս
դալու» ժամանակ, Որլեանի հերցոգի պա-
լատում մի ծիծաղելի դեպք ե պատճեռում։
Հերցոգը շատ գեղեցիկ ու փոքրիկ մի
ժամացուց է ունենում, վոր մեծ գու-
մար ե արթենում։

Ընդունելությու-
նը վերջանալու
վրա յե լինում,
յերբ Հերցոգը
նկատում ե, վոր
ժամացուցն ան-
հետացել ե։

Նրա համհարզներից մեկը բացական-
չում ե.


—Պարոնաչք, դուռը պետք ե փակել ու
բոլորին խուզարկել։ Նորին պայծառա-
փացության ժամացուցը գողացել են։

Բայց հերցոգը, վոր իրեն շատ խորա-
մանկ եր համարում, առարկում ե.




— Զարժե խուզաբկել: Ժամացույցը ձեռնով ե, կես ժամ՝ չի քաշի, և իր վերցնողին կմատնի:

Բայց և այսպես ժամացույցը չի գտնը վում: Ըստ Երեվութին դողն ավելի խորածանկ ե լինում քան չերցողը, և ժամանակին գլխի յե ընկնում ու ժամացույցը փչացնում:



Գրպանի խփող ժամացույցն ամեն ժամանակ հարմար չեր լինում: Այս ժամացույցը կես ժամը մի անգամ խփում եր, և զնդոցը, ասում են, խանդարում եր խոսակցությունը: Թերեւս հենց այս պատճառով ել այդ ժամացույցը գործածությունից դուրս ե ընկել:

Շատ հետո միայն անդիմակի ժամագործներին հաջողվում ե այսպիսի ժա-



մացույց պատրաստել, վորով գլխից հուպ տալու ժամանակ եր միայն խփում:

Այդպես «խփող ժամացույց» յես տեսել եմ, վորը հոչակավոր Բրեգետի ձեռքի գործն եր, Գլխին հուպ տալիս անսովոր ու մելամաղձուր զնդոց ե լսփում: Փոքրիկ մուրճիկներն ոկրղբից ժամերն են խփում, հետո՝ քառորդ ժամերը և վերջապես ըռպեները:



Ակամալից սկսում է ձեզ թվար, թե ար հանդարտ ու տխուր ձայնը ինչպո՞ք մի



հեռու յերկրից, հեքաթային մի քաղաքի գանդականերից և գալիս, վորից ձեզ բաժանողը միմիացն ժամա-

ցուցի վոսկե խուփն ե:

Անդիմայի թագավոր կառ-
լոս Ա-ը հենց նոր հնար-
ված և արդպես խփող մի
ժամացուց և նվեր ուղար-
կում, Ֆրանսիայի թագա-

վոր Լյուդովիկ X|V-ին: Հնարողի գաղա-
նիքը բաց չանելու համար, անդիմացի
վարպետը ժամացուցին այնպիսի կող-
պեք և գցում, վոր Ֆրանսիայում չկա-
րողանան բանալ: Մեխանիզմը ահսնելու



համար խուփը բացելու վոչ մի հնարա-
վորություն չի լինում:

Թագավորի ժամագործ Մարտինին այդ
ժամացուցի վրա վորքան չարչարվում է,
բան դուրս չի գալիս: Նրա խորհրդով
մարդ են ուղարկում կարմելիտաի վան-
քից 90 աարեկան ժամագործ ժան Տըր-
յուշեցին կանչելու, վորն այնտեղ իր կան-
քի վերջին որերն եր անցկացնում:

Ծերունուն պատվիրում են ժամացուց-
ցը բացել, բայց չեն ասում, թե ումն ե:
Տրյուշեն առանց չարչարանքի խուփը
բայց և անում և անդիմացի ժամագործի
գաղանիքը գտնում: Բայց նա վորքան ե
զարմանում, յերբ հայտնում են, թե այդ
աշխատանքի համար տարեկան 600 լիվը
թոշակ և նշանակված իրեն:

ԺԱԿԵՄԱՐՆ ՈՒ ԻՐ ԿԻՆԸ

Ցեմե պատահի, վոր դուք յերբեք ընկ-
նեք Ֆրանսիայի Դիժոն քաղաքը, անշուշտ

ձեզ ցուց տվող կլինի ժակեմարին ու
իր կնոջը:

Ժակեմարը միջին տարիքի տեր, լայն-
տեղ գլխարկով ու ծխամորձն ատամ-
ների արանքը դրած մի մարդ եւ իսկ նրա
կինը վոչ մի բանով չի տարբերվուն այն
գեղջկուհիներից, վոր շրջակա գյուղերից
տոն որերին հավաքվում են Դիժոն:

Բայց և այնպես ժակեմարներին ամ-
բողջ աշխարհը գիտե: Նրանց պատվին
«ժակեմարի ամուսնությունը» վերնագը-
րով մի չափածո պոեմ ե գրված: Դիժո-
նի քաղաքացիները նրանց միշտ հարգան-
քով — ներքեխց վերև են նալում: Յեզ
դժվար ել կլիներ այլ կերպ նայել, վո-
րովհետև ժակեմարները լեռբեք ել չեն
իջնում ժամացուցավոր բարձր աշտա-
րակից, վորտեղ նրանք ապրում են: Իսկ
նրանց արդքան բարձր թառելու պատճառն
այն ե, վոր իրենց ձեռքի մուրճիկներով
լուրաքանչյուր ժամին խփեն ոճծ ու
թնդաձայն զանգին:

120

Ժակեմարները վաղուց են դրված այն-
տեղ — Հենրիխ դե Վիկի ժամացուցի
հետ միաժամանակ: Յեզ ասում են, վոր
ժամագործ ժակեմարի անունով են նրանց
ազգականչում, այն ժակեմարի, վոր
բրոնզից ե պատրաստել նրանց: Շատ հե-
տո նրանց մի փոքրիկ մանկիկ ե ծնվում,
վորը քառորդ ժամերն ե խփում:

Տարիներ ու դարեր են անցնում: Այ-
տեղ ու այնտեղ — մեծ ու փոքր քաղաք-
ներում — զանգակավոր ժամացուցներ,
կամ «կուրանտներ»*) են յերեան գալիս:
Նրանցից մի քանիսի կառուցվածքը յերա-
ժշտական արկղների կառուցվածքի տպա-
փորություն ե թողնում: Ժամացուցի մե-
խանիզմը մուրճերն այնպես ե բարձրաց-
նում, ասես դաշնամուրի լինեն, ու հե-
տո իջեցնում եւ Մուրճիկն ընկնում ե
զանգին ու սովիպում ե ձայն հանել:


Ուրիշ կառուցվածքի՝ ստեղնավոր կու-
րանտներ ել կային, վորոնք նվագում

*) Կուրանտ — ծեծան: Ծ. Թ.

ելին այնպես, ինչպես մենք կաշնամուրն
ենք նվագում:

Չանգտիներն այնպես են ընարսւմ,
վոր խփերու ժամանակ մեկը դո, միու-
սը՝ ըե, յերբորդը՝ մի և այն ձայն ե
հանում: Այնպես վոր, այդ զանգերի վրա
ամեն տեսակ յերգ կարելի յե նվագել:
30 և նույնիսկ 40 զանգանոց կուրանտ-
ներ ել ելին լինում: Մի ժամանակ նը-
րանք շատ մողայի ելին, մանալանդ չո-
լանդիայում: Թերևս Պետրոս Եին այդ կու-
րանտների նվատմամբ իր հակումն այսուե-
զից եր բերել: Պետերբուրդի յեկեղե-
ցիներից շատերի վրա արտասահմանից
թանդ գնով բերած կուրանտներ ելին
դրված: Վորովհետեւ Ռուսաստանում կու-
րանտ բանեցնել չելին իմանում, ուստի,
ստիպված ելին կուրանտի վարպետները,
ինչպես ուսւներն ելին ասում «զանդա-
հար յերաժիշտներ» ել բերել տալ:

Մի աբձանագրություն ե մասցել վոր-
տեղ ասված ե, թէ «1724 թ. ապրիլի 23-ին



շինարարական գրասենյակում մի պար-
մանագիր ե կնքված ոտարերկրացի նը-
վագող յերաժիշտ Յոհան Քրեստի Ֆերըս-
տերի հետ, վոր Սանկտ-Պետերբուրգի
Պետրոպավլովսկի բերդի կատարի զան-
դանվագանոցում Նորին Կայսերական Մե-
ծությանը յերեք տարի ծառայություն
պետք ե կատարի»։ Մեր որերում այդ ժա-
մացուցն «Ինտերնացիոնալ» ե նվազում։

Պետրոսն ուշագրավ մի ուրիշ կուրանտ
էլ ուներ, վորի զանգակներն ապակուց
ելին, և ջրի ժամացուցի պես, ջրով եր
բանում։ 1725 թ. Պետերհոփում հանդի-
սավոր մի հրավառություն ե տեղի ու-
նենում։ Այդ տոնին ներկա յեղողներից
մեկը պատմում ե, վոր բոլորին առանձ-
նապես զարմացնողն այդ կուրանտն ե յե-
ղել, կամ, ինչպես այն ժամանակ ելին
ասում՝ «Ջրով բանող զանգակատունը»։

ՅԵՒԿՈՒ ՄԱՆՈՒԿ


Հիշում եք, վոր գրքիս սկզբում ասվում
եր, թե ժամանակը միլիոնավոր մեջոցնե-

ըով կարելի յե չափել՝ կարդացած գրքի
եջերով, ճրագի մեջ վառված ձեթի քա-
նակով և այլն:

Այս առթիվ յես մոտ ժամանակներս
մի մանկան հետ խոսակցություն են ու-
նեցել:

— Զի՞ կարելի արդյոք, — հարցնում եղ
նա, — ժամանակը չափել կոշիկի քթով
հատակը թխացնելով ու զարկերը համ-
րելով:

Յես դեռ չպատասխանած, իմ փոքրիկ
բարեկամն ինքն ե գլխի ընկնում, վոր
իր հնարած միջոցը բանի պետք չի. Հե՞
վոր յերկու զարկի միջև ամեն անգամ
միենույն ժամանակը չի կարող տեսել,
դեռ մի կողմը թողնենք այն, վոր վոտ-
քով հատակը ծեծելը հոգնեցնող աշխա-
տանք ե: Ժամանակը չափելու համար
պետքականը միայն այն կինի, վորը
միշտ միտչափ ժամանակ ե շարունակ-
վում: Զե՞ վոր վոչոք չի բանեցնի այն
մետրը, վորը մեկ կարճ ե, մեկ յերկար:



Մարդիկ շատ վաղուց են սկսել մտածել այն խնդրի վրա՝

թե ինչն ե միշտ միաչափ ժամանակ շարունակվում:

Մեկն ասում եր, թե՝ արևածագից արևածագ միշտ միաչափ ժամանակ ե տևում—մի որ:

Ճիշտ ելին ասում: Ուստի և սկսեցին այնպիսի ժամացուց պատրաստել, վորով արևն ինքն եր ժամանակը ցուց տալիս: Բայց այդ ժամացուցն անհարմար եր—դուք ինքներդ եք այդ տեսել:

Վոմանք ել ինդիրն այլ կերպ ելին լուծում: Նրանք ասում ելին, թե ջուրն անոթից միևնույն ժամանակում ե դուրս գալիս: Այդ ել ճիշտ ե. միայն թե անցքը չաղտոտվի. Ջրի ժամացուցը լավ բանելու համար ուրիշ շատ բան ել ե պետք: Բայց և այնպես լավագույն ժամացուցն անգամ—այն, վոր կտեղիբին եր հնարել—միայն ժամն եր ցուց տալիս. ըստելի մասին նույնիսկ խոսք լինել չեր կա-

ըող և, բացի այդ, շատ շուտ ել փշա-
նում եր. բավական եր, վոր մի փոքրիկ
խողովակ աղտոտվեր—և պշտամվ:

Ծանրակով ժամացուցը թե դիմաց-
կուն եր և թե հուսալիք: Բայց այս ժա-
մացուցի նկատմամբ ել վոչ վոք չեր կա-
րող հուսալ, թե ծանրակը հավասարաշափ
ե իջնում: Իզուր չեր, վոր հին ժամա-
նակները ժամացուցն ավելի շատ եր խա-
բում քան հիմա: Շատ և շատ խնամքով
պետք ե պատրաստվեր այն և արեի հետ
ստուգվեր, վոր տանելի կերպով աշխա-
տեր:

Այդ բոլոր ժամացուցներն անհամե-
մատ ավելի լավ ելին ժամանակը չա-
փում քան այն տղայի կոշիկը, վորի մա-
սին խոսեցինք:

Մոտ 350 տարի առաջ մի ուրիշ տղա
ղարձալ նույնն եր վնասրում, թե ի՞նչն
ե միշտ միաշափ ժամանակ շարունակ-
վում: Դա Գալիլեո Գալիլեյն եր, այն,
վոր հոչակավոր գիտնական դարձավ և

վորին քիչ եր մնում այրեցին այն պատ-
ճառով, վոր յերկիրը պտտվում ե արե-
վի շուրջը: Իհարկե՝ արեի համակար-
գության կառուցվածքն ու արեին յերկ-
րի շուրջը պտտեցնել տալը նրանից կախ-
ված չեր: Բայց նա համարձակություն
ուներ այն խավար ժամանակներում ա-
պացուցել այն, ինչ
նույնիսկ հիմիկվա
առաջին աստիճա-
նի գպրոցական ա-
շակերտը գիտե, Յեվ
այս բանի համար
քիչ եր մնում նրան,

ինչպես այն ժամանակ ելին ասում, մա-
հապատժի յենթարկելին «առանց արյուն
թափելու» խարուցկի վրա, իբ բոլոր հա-
մաքաղաքացիների ներկայությանը:

Գալիլեյի մասին այսպիսի մի բան են
պատմում: Յերբ նա գեռ յերեխա յեր, մի
անգամ ժամերգության ժամանակ պատահ-
մամբ եկեղեցի յետնում: Նա խկուն և թ-



գրավվում ե մի մեծ կանթեղով, վոր նը-
րանից քիչ հեռու կախ ե տրված լինում
գմբեթի տակ ամրացրած մի շղթալից:
Մեկն ուսը կամ գուշը դիպցնում ե կան-
թեղին, և կանթեղը դանդաղորեն լետ ու
առաջ ե ճոճվում:

Գալիլեյին թվում ե, թե կանթեղի ճո-
ճումները միշտ միաչափ ժամանակ են
շարունակվում: Ճոճումները հետզհետե
ավելի ու ավելի լեն նվազում, մինչև վոր
կանթեղը բոլորովին հանգստանում ե,
բայց թե մեծ թափով շարժելուց ել ճո-
ճելու ժամանակը միաչափ ե լինում:

Գալիլեյը շատ հետո լե միայն ստու-
գում իր դիտողությունը: Նա նկատում
ե, վոր բոլոր ճոճանակները — թելից
կախ տված բեռնիկները — իրենց ճոճում-
ները միահավասար ժամանակ են շա-
րունակում, լեթե թելը միաչափ լերկա-
րություն ունի: Թելը վորքան կարճ եր
լինում լուրաքանչյուր, ճոճան տեղու-
թյունն այնքան քիչ եր լինում:

Դուք ինքներդ ել կարող եք զանա-
զան լերկարության մի քանի ճոճանակ
շինել և կախ տալ թեկուզ հենց ճեր մահ-
ճակալից: Յեթե դուք այդ ճոճանակները
ճոճելու լինեք, կտեսնեք, վոր կարճ ճո-
ճանակներն ավելի հաճախակի լեն ճոճ-
վում քան լերկարները, և վոր միանման
ճոճանակները համաչափ ել ճոճվում են:
Կարելի լե այնպիսի ճոճանակ ել պատ-
րաստել, վորի լուրաքանչյուր ճոճումը —
աջ և ձախ — ուղիղ մի վայրկան տեի:
Այս բանի համար թելի լերկարությունը
մոտ մի մետր պետք ե լինի:


Յերբ Գալիլեյն այս բոլորը նկատում
ե, հասկանում ե, վոր վերջապես գտել
ե հին հանելուկի լուծումը, գտել ե այն,
վոր միշտ միաչափ ժամանակ ե տեսում,
Նա սկսում ե մտածել, թե ինչպես անի, վոր
ճոճանակը հարմարեցնի ժամացուցյին
և այնպես անի, վոր ճոճանակը ժամա-
ցուցյի բանելը կանոնավորի:

Այդպիսի մի ժամացուց պատրաստել նրան չի հաջողվում։ Մի ուրիշ հոչակավոր գլուխական՝ չուլանդացի Քրիստիան Հյույզենսն եւ այդ անում։

ԻՆՉԻ ՄԱՍԻՆ ԵՐ Ա.ԱՌՈՒՄ ՃՈՃԱՆԱԿԸ


Հիշում եմ, փոքր ժամանակս, յերբ գեռ չելի հասկանում, թե ժամացուցն ինչն համար ե, մեր պատի մեծ ժամացուցի ճոճանակն ինչ-վոր խիստ մարդու պիտի եր թվում ինձ, վորը չի դադարում մի վորեն խրատական բան պնդելուց. որինակ.

Հավ չի, լավ, չի
Մա—տը ծը—ծեր
Շատ ուշ միայն,
յերբ յես հաղթահարեցի ալաքների
գերբով ժամի քառ



նիսն իմանաւ լու գժվարին գիտությունը, այնուամենայ-նիվ, վորոշ չափով չաղատվեցի այն յերկյուղից, վոր ժամացուցն եր ինձ ներշնչել: Բազմաթիվ ան վակների բարդ կյանքն ինձ թվում եր այնպիսի միգաղտնիք, վոր յերբեք չեմ հասկանա:

Մինչդեռ ժամացուցի կառուցվածքն անքան եւ



բարդ չե։ Այս նկարը ցուց ե տալիս պատի ճոճանակավոր ժամացուցը։

Դուք այստեղ առանց դժվարության կարող եք գտնել ծանրակն ու այն թըմբուկը, վորի վրա պարանը փաթաթված ե։ Թմբուկի հետ միասին պտտվում ե նաև ատամնանիվը։ Այս առաջին անիվը պտտեցնում ե բանեցնող անվակը, իսկ վերջնիս հետ՝ նաև ժամանիվը, վոր նրա հետ մի առանցքի վրա լե հազցրած։ Այդ անիվն արդպես ե կոչվում այն պատճառով, վոր ժամանիշ սլաքը նրա վրա լե ամրացրած։

Ժամանիվը պտտեցնում ե լերկբորդ բանեցնող անիվը, իսկ սրա հետ ել լարանիվը (ХОЛОВОЕ колесо): Բոլորն առաջմ այնպես ե շինված, ինչպես Գալիլեյից առաջ լեղած ժամացուցների մեջ։ Տարբերությունը միայն այն ե, վոր այստեղ պտուտան ու ճոճան չկա, իսկ փոխարենն ուրիշ հարմարանք կա, վոր ժամանիվը պահում ե ու թուլլ չլ տալիս

վոր ծանրակը չափազանց արագ իջնի։ Վերեվում՝ լարանվի վրա կորացրած մի թիթեղ կա, վոր խարիսխի տպավորություն ե թողնում։ Այդ թիթեղը հենց խարիսխ ել կոչվում ե։

Խարիսխը շարունակ ճոճվում ե մեխանիզմի հետեւի կողմից կախ տված ճաճանակի հետ։

Եենթադրենք, թե այս ըոպելիս խարիսխի ձախ կեռը վովել ե լարանվի ատամների մեջ։ Լարանիվը մի ակնթարթ կանգ կառնի։ Բայց քարն իր բանն իսկույն կտեսնի և կստիպի, վոր լարանվի խանգարող կեռն իրենից լետ տա։ Այդ հարվածից կեռը կբարձրանա ու անիվի մի ատամը բաց կթողնի։ Բայց հենց այդ զարկից ել ճոճանակը դեպի ձախ կճոճի, և խարիսխի աջ կեռը կիջնի ու նորից կարգելակի լարանիվը։

Այսպես ել անվերջ կշարունակվի։ Ճաճանակն աջ ու ձախ կճոճի՝ թուլլ չտալով, վոր անվակը լուրաքանչյուր հար-

վածից առաջ շարժվի վոչ ավելի քան
մի ատամ:

Բայց չե վոր մենք գիտենք, վոր ճո-
ճանակի լուրաքանչուր ճոճը միշտ միա-
միաչափ ժամանակ ե տու: Այնպես վոր,
պարզ ե, ճոճանակն ամբողջ մեխանիզմին
կստիպի համաչափ, ուղիղ աշխատել, վո-
րին զուգընթաց, ժամանակն ել ուղիղ,
շարունակ միաչափ կարճ քայլերով առաջ
կշարժվի:

Հիմիկվա ժամացուցների մեջ ըոպեա-
ուլաք ու վայրկենասլաք ել կա, վորի հա-
մար սահմանակած են յեղել մի քանի ան-
վակ ևս ավելացնել: Բայց այս բոլորը
մանրամասնություն ե, վորի մասին կա-
րիք չկա, վոր մենք խոսենք:


Դուք այսպիսի մի հարց կարող եք տալ.
Ճոճանակը բավականին արագ ե ճոճվում,
ուրեմն՝ ժամանիվը բավականին արագ
պետք ե շարժվի: Իսկ ինչու յե նրա հետ
կապված ժամանիվն այնքան դանդաղ պը-
տըտվում, վոր 12 ժամում միայն մի պը-
տըտվում ե կատարում:

Բանն ել հենց այն ե, վոր անիմսերն
ու բանեցնող անվակներն այնպես են
դասավորված, վոր ամեն մեկն այն ա-
րագությամբ ե պտտվում, ինչ արագու-
թյուն անհրաժեշտ ե:

Յենթաղը բեք, թե
մի վորեւ բանեցնող
անվակ 6 ատամ ունի,
իր հետ կապված անի-
վը՝ 72, անիվ մինչեւ
մի պտույտ անի, բա-
նեցնող անվակն այն-
քան պտույտ կանի,
վորքան անգամ 6-ը
պակաս ե 72-ից:

Ուրեմն՝ բանն ամբողջապես այն ե, վոր
անհրաժեշտ թվով ատամներ լինեն:

Վորպեսզի ժամանիվին չափազանց շատ
ատամ չկինեն, նրա ու լարանվի արան-
քը մի զույգ լրացուցիչ ատամնանիվ ել
են դնում անիվ և բանեցնող անվակ:
Այս դեպքում, որինակ, կարելի լե այն-



պես անել, վոր ժամանիվը լրացուցիչ անվից 12 անգամ դանդաղ պտտվի, իսկ լրացուցիչը՝ լարանվից 60 անգամ դանդաղ։ Այն ժամանակ ամեն ինչ տեղին կլինի. թե անիվները շատ մեծ չեն լինի և թե արագությունն այնպես կլինի, ինչպես պետք է։

ՆԱԽՆԱԴԱՐՑԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՆԵՐԸ

Ճոճանակը հնարելուց հետո վերջապես ժամացուցը դարձավ ճիշտ սարք։ Քանի գնում, ժամացուցի կառուցվածքն ավե-



լի ու ավելի յե լավանում և միաժամանակ այն ավելի եժանանում ու մատչելի յե դառնում։

Միշտ ել ալսպես ել լինում։

Յերբ ուղիոն հնարեցին, քչերն այս բանը գիտելին, և այն ել լսելով։ Բայց




գիտնականները վորքան շատ ելին աշխատում ուղիոն ապարատները լավացնելու վրա, վերջիններս այնքան ավելի ելին լավանում ու մատչելի դառնում։ Հենց հիմա ով ե զարմանում։ Երբ բանվորների աների ու գյուղական խրճիթների գլուխն անտենաների մի ամբողջ անտառ ե տեսնում։

Ճիշտ եւ ժամացուցի գործը շատ ա-
վելի դանդաղ երառուած գնում, քան ու-
ղիոյինը:

Յերկու հարյուր տարի յեւ անցել այն
որից, ինչ Հենրիխ Դե-Վիկն իր ժամա-
ցուցը պատրաստել եւ, իսկ Փարիզում
ջրի կամ ավազի ժամացուց ճարելն ա-
վելի հեշտ եր, քան մեխանիկականը:
Փարիզի ժամագործների նորաստեղծ յե-
խըն այդ ժամանակ ընդամենը 7 հոգուց
եր բաղկացած, բայց յերկու հարյուր տա-
րուց հետո այդ ցերին արդեն 1:0 մարդ
ուներ և նույնիսկ կառապանի մոտ ել
կարելի յեր ճարել:

Յեթե մենք կարողանայինք տեղափոխ-
վել XVIII դարն ու աչք ածել ժամագոր-
ծի խանութը, ապա կտեսնելինք, վոր
պատերի տակ յերկար սեղաններ դրված
մի մեծ սենյակ ե այդ: Այդ սեղանների
առաջ մի քանի գոգնոցավոր մարդիկ են
աշխատում: Դրանք վարպետացուների են,
վարպետացուների շատ սերունդների մա-



շած կաշե աթոռներին նստած՝ նրանք
գբաղվում են իրենց ծանր աշխատանքով։
Սեղանի վրա ամեն տեսակի բազմա-
թիվ խարսոցներ ու մուրճիկներ կան,
բայց վոչ մի մեքենա, վոչ մի հաստոց
այնտեղ չեք գտնի։ Ամեն ինչ ձեռքով
ե շինվում։ Յեկ ինչքան ճարտարողեն
ե շինվում։

Որինակ՝ ահավասիկ բրոնզե մի ժամա-
ցուց, վոր պատկերում ե թեթև կամար
ունեցող մի շենք, վորի կամարի ան-
կյունները հենված են միրուքավոր չորս
հսկայի վրա։ Նրբաքանդակ աշխատանքի
նախշերը զարդարում են պատերը։ Կա-
մարի շուրջն ու պատվանդանի մոտ տե-
ղավորված են առյօւծներ, թևավոր հրեշ-
ներ, ֆանտաստիկ կենդանիներ պատկե-
րող բազմաթիվ Փիգուրներ։

Բայց ուր ե խանութի տերը։ Նա
կանգնած խոսում ե պալատական մի
պճամամոլի հետ, վոր լեկել ե ժամացուց
գներու։ Յերկարափեշ կապա հագած ու

թասակ դրած ծերունի ժամագործը
փորձում ե պատվավոր գնորդին համո-
զել, վոր բոլորովին չի կարող ժամա-
ցուցն ապառիկ տալ։ ԶԵ վոր նորին
պայծառափայլության վրա առանց այն
ել հինգհարյուր լիվը պարտք կա։

Բաց դռնից լերեսում ե նորին պայծա-
ռափայլության կառեթը՝ ծանրակառքը
չորս հակայական անիվներով ու զար-
դարուն ձևով կորացրած պատերով։

Հստ լերեվութին ծերունին այնու-
ամենայնիվ կզիջի։ Այդպիսի մի ականա-
վոր մարդու հետ վիճելն առանց վտան-
գի չի կարող լինել։ Մեկ ել տեսար՝
Բաստիին արժանացար։

Լավ ժամագործ լինելու համար մեխա-
նիկան հիմնովին պետք ե իմանալի։
Տեխնիկական դպրոց այն ժամանակ չը-
կար, գիտելիքը հորից վորդուն եր հա-
ղորդվում, վարպետից՝ վարպետացուին։

Զարմանալի չի, վոր առաջվա ժամա-

նակների տաղանդավոր գյուտարարները
ժամագործներ ելին։

«Զըին մանող, կամ Շվատեր» մեքենան
հնարյող Արկրայտը ժամագործ եր։ Նրան
այդպես ել կոչում ելին «Նոտինգեմի
ժամագործ»։ Բարակ թել մանելու «Զեն-
նի» մեքենան պատրաստող Հարզրիվսը
ժամագործ եր։ Վերջապես շոգենավ հը-
նարող ֆուլտոնը նույն-
պես ժամագործ եր։

Այդ ճարտարապետնե-
րը վոչ թե տեխնոլոգի-
ական ինստիտուտնե-
րում են սովորել, այլ
ժամագործի խանութում։ Բայց եայնպես
նրանց պատրաստած մեքենաները հիմա
ել են բանում, իհարկե բարելավված,
բարեփոխված վիճակում։

Բայց այդ դեռ քիչ ե։ Այդ մեքենագետ-
ների ձեռքով, այն ձեռքերով, վոր սովոր
ելին գործ ունենալ փոքրիկ, հազիվ նըշ-



մարելի բաների հետ, հոկայական գործ
ե արված լեղել:

Հենց վոր մանող, գործող, շոգու և
այլ մեքենաները՝ լույս ընկան, ձեռքի
աշխատանքը տեղը զիջեց մեքենական
աշխատանքին: Ամեն տեղ ֆաբրիկների
ու գործարանների քարե պատեր բարձ-
րացան: Գյուղացիները գյուղը թողին ու
աշխատանքի համար քաղաքի ճանա-
պարհը բռնեցին:

Աշխարհում ամեն ինչ փոխվեց:
Ինքը՝ ժամանակը կարծես թե սկսեց
արագ ընթանալ: XVIII դարը մեզնից
հեռու լե արդյոք, Այսինչ մի հարյուր,
հարյուր հիսուն տարվա ընթացքում ա-
վելի փոփոխություն ե կատարվել, քան
առաջ՝ հազար տարում:

ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ՄԱՐԴԻԿ

Բազմաթիվ հեքիաթներ կան արհես-
տական՝ մեխանիկական մարդկանց մա-
սին, վորոնք ամեն տեսակ աշխատանք

հնազանդությամբ կատարում են: հար-
կավոր ե միայն այս կամ այն կոճակը
սեղմել: Այդ հեքիաթներից մեկը պատ-
մում ե, որինակ, արհեստական մարդիկ
հնարողի մասին, վորի տանր վոչ մի կեն-
դանի ծառա չկար: Ամեն ինչ կատարում
ելին ճշտապահ ու արագաշարժ տիկնիկ-



ները: Գտնելով, վոր տիկնիկներին գը-
րուխ պետք չե, գյուտարարը նրանց ան-
գլուխ եր պատրաստել: Մեքենաներն առ-
հասարակ մարդկացին ձևի կարիք չունեն:
Յեթե դուք մանածագործարանում լեղել
եք, իհարկե տեսած կինեք այն մեքե-
նաները, վոր հազար մանողից լավ ու ա-
րագ են աշխատում: Յեվ իհարկե անմիտ

բան կլիներ, լեթե այդպիսի մի փոքր
խնայողաբար պատրաստված մեքենայի
փոխարեն հազար արհեստական կին պատ-
րաստվեր, և իլիկները ձեռքերը տրվելին:

Արկրայտը, Հարգըիվսը և առաջին մե-
քենան հնարող այլ գյուտարարներն այդ
բանը լավ ելին հասկանում:

Բայց ժամագործների մեջ կային նաև
այնպիսիք, վոր ուզում ելին արհեստա-
կան մարդ պատրաստել: Յեվ լսկապես՝
նրանցից վուանց հաջողվում ե շարժվող
ու բազմաթիվ այնպիսի տիկնիկներ
պատրաստել վորոնք, ճիշտ ե, անոգուտ,
բայց շատ սրամիտ կերպով պատրաս-
տած խաղալիքներ ելին:

«Սանկտ-Պետերբուրգսկիյե վեղոմոս-
տի» թերթի 1777 թվի 59 Ն.-ում այս-
պիսի մի հայտարարություն ելույս տես-
նում.

«Գլխավոր վոստիկանության թուլար-
վությամբ այստեղ, Կազանի լեկեցու
և Սիեզի փողոցի մեջտեղը, Մարկովի

տան մեջ կցուցադրվի մինչև որս այս-
տեղ չտեսնված մեխանիկան-լեռաժըշ-
տական մի մեքենա, վոր ցուց ե տալիս
կարգին հազնված ու պատվանդանի վը-



ըա նստած և իր առջև գրած ճարտա-
րորեն պատրաստված ստեղնաշարի վը-
րա նվագող մի կին, վորո նվագելու յե-
ամենալնտիր, նոր ճաշակով հնարված
10 պիես, այսինքն՝ 3 մենուետ, 4 արիա,
2 պոլոնեզ և 1 քայլերդ: Նա մեծագույն
արագությամբ կատարում ե ամենադժվա-
րին գեղգեղանքներ և յուրաքանչյուր
պիես սկսելուց առաջ բոլորին գլուխ ե

տալիս։ Մեխանիկան ճաշակած և առհաս-
սարակ գեղարվեստ սիրողները քիչ զր-
վարձություն չեն ստանա՝ դիտելով նը-
րա ձեռքերի անբռնազբոսիկ շարժումնե-
րը, նրա աչքերի բնական նայվածքն ու
ճարտարորեն գլուխը շարժելը։ Այս բո-
լորը հանդիսատեսներին, ճիշտն ասած,
կարող ե զարմանք պատճառել։ Այս մե-
քենան ամեն որ կարելի լե տեսնել ա-
ռավոտյան ժամի 9-ից մինչև յերեկոյան
10-ը։ Յուրաքանչյուր տիկին վճարում ե
50-ական կոպեկ, իսկ անվանի պարոն-
ները՝ վորքան բարեհաձեն։

Ուրիշ ավելի ճարտարորեն պատրաս-
տած ավտոմատ մեքենաներ ել կային։
Որինակ՝ ֆրանսիացի Վոկանսոնը մի ուշ-
ընդահար եր պատրաստել, վորը 12 տե-
սակ բան եր նվազում։ Յեկ այդ սրնգա-
հարը մատներն այնպես արագ եր խա-
ղացնում, վոր կարծես ձեռքերը բոլորո-
վին կենդանի լինելին։

Բայց իրենց ավտոմատներով առանձ-

նապես հոչակված ելին Դրոզները հայր
և վորդի։

Նրանց պատրաստած խաղալիքներից
մեկը պատկերում եր մի փոքրիկ յերե-
խա, վոր, փոքրիկ սեղանի առաջ դրված
մի աթոռի վրա նստած՝ ճվում եր։ Այդ
խաղալիք յերեխան գրիչը ժամանակառ-
ժամանակ թաթախում եր թանաքամա-
նի մեջ ու հետո թափ տալիս ավելորդ
թանաքը։ Գեղեցիկ ձեռագրով նա ամ-
բողջ դարձվածքներ եր գրում՝ ուր հար-
կըն ե, գլւագրեր դնելով, բառերը բա-
ժանելով և մի տողի վերջից մյուսի ըս-
կեղըին անցնելով։ Դրա հետ միասին նա
անընդհատ նայում եր իր առջևը գրված
գրքին, վորից գասն եր արտագրում։

Մյուս խաղալիքը պատկերում եր մի
շնիկ, վոր պահակ եր կանգնած մի կո-
ղով խնձորի մոտ։ Հենց վոր մի խնձոր
վերցնեցիր, շունը կակսեր աչնքան բարձր
ու բնական կերպով հաջել, վոր իսկա-
կան շները, լեթե մոտիկ ելին լինում,

սկսում ելին հաջել ի պատասխան նրա
հաջոցին:

Ի միջի այլոց, Դրոզները մեխանիկական
մի դաշնակահարուհի ել ելին պատրաս-
տել, վորն ստեղնաշարի վրա զանազան
բաներ եր նվագում: Ալինի՞ թե հենց այդ
լեռաժշտական մեքենան էր, վոր հետո
Պետերբուրգում ցուց ելին տալիս:

Բաց Դրոզների ամենաաչքի ընկնո-
ստեղծագործությունը պաճուճապատանքը
ների մի թատրոն եր, և այդ պաճուճա-
պատանքները մի ամբողջ պիես ելին
ներկայացնում:

Բեմը ներկայացնում եր բարձրաբերձ
լեռներով լերիզված ալպիական մի մար-
դագետին: Մարդագետնում մի մեծ հոտ
եր արածում, վորի պահապանը մի դամ-
փըռ եր: Լերան տակ լերեվում եր գյու-
ղացիական մի խրճիթ, իսկ հակառակ
կողմը, բեմի մյուս ծալրին, գետակի ա-
փին՝ մի ջրաղաց: Գործողությունն այս-
պիս ե սկսվում. գյուղացիական բակի

դարբասից դուրս ե գալիս իշխն նստած
մի գյուղացի: Նա ջրաղաց ե գնում: Հենց
վոր նա մոտենում ե հոտին, շունն ըս-
կըսում ե հաջել, և մոտակա այրից հո-
վիվը դուրս ե գալիս, վոր տեսնի, թե ինչ
է պատահել: Այրը վերադառնալուց առաջ
նա սրինգը հանում և մի գեղեցիկ
մեղեղի յե նվագում, վորին պատասխա-
նում ե արձագանքը: Այդ ժամանակ գյու-
ղացին գետակի կամուրջը անցնելով՝
մտնում ե ջրաղացի բակը: Նա այնտեղից
վոտքով ե վերադառնում՝ սանձից քաշե-
լով իր եշը, վորին լերկու պարկ ալյուր
ե բարձել: Նա շուտով հասնում ե իր
խրճիթը, հովիվը վերադառնում ե այրը,
և բեմն ստանում ե այն տեսքը, վոր ուներ
ներկայացումից առաջ:

Պետք ե նաև ավելացնել, վոր այդ
փոքրիկ բեմի վրա լերկինք եր պատ-
րաստված, վորի վրա հանդարտ բարձ-
րանում եր արևը: Յերբ ժամացույցը
ցուց եր տալիս ժամի 12-ը, արևը հաս-

Նում եր իր ճանապարհի ամենաբարձր
կետին ու հետո սկսում եր թեքվել:

Մենք ել ենք ունեցել ավտոմատի հը-
մուտ վարպետներ: Ճորտատիրական ժա-
մանակների թանգարանում (Լենինգրա-
դում), որինակ, մի սայլակ կա, վոր վը-
րան յերաժշտական արկղ ունի և անցած
ճանապարհը չափելու հաշվիչ: Ճանա-
պարհ գնալիս յերաժշտական արկղը յեր-
գերով ու քալերգներով զվարճացնում
ե ձեզ, իսկ հաշվիչը վերստերը, սաժեն-
ներն ու արշիններն ե հաշվում: Յերա-
ժշտական արկղի վրա մեծամորուք ու
կապա հագած մի մարդ ե պատկերված:
Պատկերի տակ զրված ե.

Սյս սայլակը սինողը
Նիժեն-Տագիլի գործարանի բնակիչ
ՅԵԳՈՐ ԳՐԻԳՈՐԵՎԻՇ ԺԵԼԵՆՍԿՈՅԵ Ե
Վորք 6ա սինել և կամովին սովորելով ու
հետարքական գիտելիով.
Սկսել ե 1785 թվին, վերջացրել ե
1801 թվին:

Սարսափելի յե մտածել, վոր մարդ իր
կյանքից 16 տարի յե գործադրել, վոր-
պեսզի կարողանա մի զվարճալի բաց
բոլորովին անոգուտ խաղալիք պատ-
րաստել:

Զե վոր ճորտատիրական ժամանակ-
ներն ե յեղել այդ, յերբ մարդու աշխա-
տանքը բանի տեղ չեր դրվում:

Մի ուրիշ ինքնուս ոռուս՝ կուլիբինը
սագի ձվի չափ մի ժամացուց ե հնա-
րում, վորը խփում ե ժամերը, կես ժա-
մերն ու քառորդ ժամերը: Յուրաքան-
չյուր ժամին ձվի մեջտեղը մի դուռ եր
բացվում: Խորքում փոքրիկ կերպարանք-
ներ ելին յերեվում: Ներկայացումից հե-
տո կուրանտները նվազում, ու դոները
փակվում ելին:

Հենց այդ կուլիբինն ել «ինքնագնաց
նավ» ե հնարում:

Հետաքրիլն այն ե, վոր Դրոզներից
մեկը մի շատ հետաքրքրական ու. վայ-
տե կաթսա ունեցող շոգեմեքենա լե

պատրաստում։ Տարորինակ ժամանակ երայդ ժամանակը, յերբ «ինքնազնաց նավերին» ուշ շոգեմեքենաներին զուգընթաց, ճարտարապետները շուն ուշ հովիվ ելին հնարում, յերբ, Պուշկինի ասածի պես, հյուրասինյակների բոլոր անկյուններում կանացի զանազան խաղալիքներ ելին ցցված, վոր Մոնդոլֆերյան ողապարիկի^{*}) հետ միասին XVIII դարի գլուխն ելին։

ՍՏԻԱ.ՍԲՈՒՐԴԻԳԻ ՄԽՅԻ ՅԵԿԵՂԵՑՈՒ ՀՐԱՇՎՆԵՐԸ


Ժամերը հաշվելու համար մենք մեխանիկական հաշվիչ ենք բանեցնում, իսկ որերը մինչև հիմա համարյա Ռոբինզոն կրուգոյի լեզանակով ենք հաշվում, վորն ամեն որ իր գավազանի վրա մի թործ (քլաոթ) եր անում, ինչու որացուցն ել մեխանիկական չդարձնել։

Յեվ իսկապես, յենթադրեցեք մի ո-
*) Առաջին ողապարիկը Մոնդոլֆյան յեղբայրներն են պատրաստեր

րացուց, վոր տարեկան մի անգամ կամ, ավելի լավ ե, տաս տարին մի անգամ լարգեր։ Աւեն գիշեր, ուղիղ ժամը 12-ին, հերթական թերթիկն ինքնիրեն կպոկվեր ու ծառի տերևի պես պտույտ տալով կընկներ հատակին։ Ճրված մարդկանց համար այսպիսի մի ուրացուց գնահատելի բան կլիներ։

Չե՞ վոր ապուշիմեկի համար վոչ մի արժեք չունի մեկի տեղ յերկու թերթիկ իրար յետեկից պոկել կամ, ընդհակառակը, մի ամբողջ շաբաթ որացուցի թերթիկները չպոկել։

Իսկ այս պատճառով վերքան անախորժություններ են լինում։ Ճրված մարդը հնգին մոռանում ե, վոր շտապ ժողովունի, վորովիետե որացուցի թերթիկին սեղվ սպիտակի վրա գրված ե.



ՄԱՐՏ

8

ՅԵՐԵՔԱԲԻ



Հանդստի որը նա աշխատանքի յե գը-
նում, վորովհետև ուխտազանց որացուցը
յերեկվան գեռ հրաժեշտ չի տվել:

Այն ժամանակները, յերբ ամեն մի
հնարովի բան հարգի յեր, մեխանիկա-
կան որացուցն ել լուց ընկալ: Դրան-
ցից ամենանշանավորը գտնվում ե Ստր-
րասբուրգ քաղաքում: Այդ քաղաքում մի
հին վանք կա: Այդ վանքը շատ դարեր ան-
ընդհատ կառուցում ելին, և այնպես ել
չվերջացրին: Այն յերկու աշխարհակից,
վոր համաձայն ճարտարապետի պլանի
պետք ե բարձրանային ընդարձակ ու
ծանր մի շենքի վրա, միայն մեկն ե իր

սրածալը գագաթը դեպի յերկինք մեկ-
նում:

Ենքի ներսը, բարձր ու գունագեղ
լուսամուտի տակ ապաստանել ե մյուս
փոքրիկ յեկեղեցին՝ նույնպիսի սրածալը
ու փոքրիկ աշտարակով: Ստրասբուրգի
մայր յեկեղեցու


հոչակավոր ժա-
մացուցն ե ալի:

Աշտարակի վրա՝
ամբողջ յերեք ցի-
ֆ երթաւ կա:

Ներքեում՝ ո-
րացուցը — ահա-
գին, գանդաղ պը-
տավող շրջանակ,

վոր բաժանված
ե 365 մասի՝ որին
կողքերին արկի՝

Ապոլոն աստծու, և լուսի՝ Դիանա
աստվածուհու կերպարանքները: Ապոլո-
ժամի քանի՛ոն ե — թ



Նի ձեռքի սլաքը ցուց ե տալիս որը՝
Սձն տարի դեկտեմբերի 31-ին, գիշերվա
ժամի 12-ին շաբաթվա բոլոր ո-
քերը նոր տեղ են գրավում։ Այսպիսի
տոններ, ինչպես զատիկն ե, վորոնք ա-
մեն տարի տեղափոխվում են, նույնակես
դասավորվում են ինչպես հարկն ե։
Յեթե տարին նահանջ ե, ավելանում է
նաև 366-րդ որը—փետրվարի 29-ը։ Ահա
այսպիսի մի զարմանալի մեխանիկական
ժամացուց պատրաստել ե հաջողվում
ժամագործ Շվալիկելին։ Ստրասբուրգի
ժամացուցը պատրաստողին։

Մեջտեղի ցիֆերբլատն ամենասովորա-
կան ժամացուցն ե։ Իսկ վերեինը մոլոր-
ակացուցն ե։ Յեթե դուք ուզում եք
իմանալ, թե մի վորեե մոլորակ այս բո-
լելիս լերկնակամարի վնասեղումն ե գլա-
նցվում, բավական ե, վոր մոլորակա-
ցուցին նայեք։ Շրջանակի վրա դասա-
վորված ե կենդանակերպի 12 համա-
եղությունը, վորոնց մեջ լերկնքում

տեղափոխվում են մոլորակները։ Յոթ
սլաք, առաջ շարժվելով, ցուց են տա-
լիս լոթ մոլորակի դիրքը։

Հիմա ավելի աշքի ընկնող մոլորակա-
ցուց են պատրաստում։ Մեր ժամանա-
կի մոլորակացուցը մի ամբողջ շենք ե,
վոր բազմաթիվ հանդիսատեսներ ե տե-
ղավորում։ Հնկայական գմբեթի ներքին
մակերեսին աստղեր են վառվում, աստ-
ղերի մեջ մոլորակներ են լողում, դուրս
են գալիս ու մայր մտնում արևն ու
լուսինը։ Մոլորակացուցի մեջտեղը հար-
թապատճերի մի մեծ լապտեր ե դրված։
Հենց այս լապտերն ել գմբեթի վրա,
ինչպես եկրանին, լուսավոր շրջանագը-
ծեր ե դցում, վորոնք աստղերն ու մո-
լորակներն են պատկերում։

Այսպիսի մի մոլորակացուց ել նորերս
մեզնում, Մոսկվայում են կառուցել։

Մոլորակացուցի մեջ նստելիս ակտ-
մալից մոռանում ես, վոր գլխավերեակ
վոչ թե պարզ ու աստղագարդ լերկինք


ե, ալլ լերկաթշբետոնե մի կամար, վոր
փողոցում ըոլորովին ել գիշեր չե, ալլ
պայծառ արևոտ որ ե կամ անձրեալին
առավոտ:

Ստրասբուրգի մայր լեկեղեցին այցե-
լող ճանապարհորդների համար ամենա-
հետաքրքրականը վոչ թե որացուցն ու

մոլորակացուց-
ցն են ալլ բազ-
մաթիվ մեխա-
նիկական կեր-
պարանքները,
վորիրենց շար-
ժումով կեն-

դանացնում են ժամացուցի ամբողջ
բարդ կառուցվածքը:

Փոքրիկ աշտարակի վերին մասում
ևեկը մլուսի վրա տեղավորված են լեր-
կու մանրանկար սրահ: Յուրաքանչյուր
քառորդ ժամը մի անգամ ներքին հարկի
սրահով մարդու մի փոքրիկ կերպարանք
ե անցնում: Առաջին քառորդ ժամին



մի փոքր լերեխա լե, 15 ըոսկելից հետո
նրա տեղը մի պատաճի լե զալիս.
անցնում ե ևս 15 ըոսկե, և նրան փո-
խարինում ե միջին տարիքի մի մարդ,
և վերջապես, լերը ըոսկեացուցյալ սրաքը մո-
տենում ե 12-ին, սրահի մեջ մի հալու-
մաշ ծերուկ ե յերեվում, նրա հետեւից՝
մահը, գերանդին ձեռքին: Այսպես՝ հան-
դիսատեսների աչքի առջևից մի ժամվա-
նեջ միայն վողջ մարդկալին կլանքն ե
անցկենում:

Այդ փոքրիկ կերպարանքներից ամեն
մեկը, դուրս գալով սրահի մեջտեղը,
զանգ ել և տալիս՝ խփելով քառորդ ժա-
մը: Ուղիղ ժամը 12-ին, վերին հարկի
սրահով անց ե կենում վանականի զգեստ.
հագած ու տասներկու փոքրիկ կերպա-
րանքից բաղկացած հանդիսավոր թա-
փոր: Հենց այդ ըոսկելին ել հարեան փոք-
րիկ աշտարակից լսվում է ուրախ, բայց
ամենին վոչ հանդիսավոր մի «ծուզրու-
դու»: Մի փոքրիկ խաղալիք-աքաղաղ ե

ալդ, վոր իր գիտեցածով և ղիմավորում
կեսորը:


ԲԻԳ-ԲԵՆ

Բիգ-Բեն ասածդ վոչ նեղը առաջնոր-
դի, վոչ ել արևադարձային բույսի ա-
նուն եւ:

Բիգ-Բենը Մեծ Բենն եւ լոնդոնի,
գուցեւ և ամբողջ աշխարհի, ամենասեծ
ժամացուցը, վոր զանվում եւ վեստին-
բստերի աշտարակում՝ այնտեղ, ուր մի
ժամանակ Մեծ Բենի նախահայր՝ Մեծ
Տոմն եր ապրում:

Մեծ Բենը ցիֆերբլատ ունի մեկական
հատ քառանկյունի աշտարակի յուրա-
քանչյուր կողմին: Ցիֆերբլատի դարձեկն
8 մետր եւ: Ցեթե կարծում եք, վոր այդ
քիչ եւ, հապա փորձեցեք չափել ձեր սեն-
յակի յերկարությունը: Ցես հավատացած
եմ, վոր Մեծ Բենի ցիֆերբլատն ավելի
մեծ դուրս կդա:


Բոպեասլաքի յերկարությունը 3¹/₂ մե-



մըլք եւ Մարդը նըս
մոտ միկնուցն ե, թե
մըջունը լուցքու
կողքին:

Յուրաքանչյուր
թվանշանը $\frac{3}{4}$ մէ-
տըլք եւ ձոճանակն
ավելի յե քաշում,
քանյերեք մեծ տղա-
մարդ — 200 կիլո-
դրամ: Բոպեասլա-
քը 15 սանտիմետր
թոփչք կատա բելով
ե շարժվում:

Ահա թե ինչ վիթ-
խարի բան ե Բիգ-
Բենը: Բայց կարծես
թե Բիգ-Բենը շուշ-
տով ստիպված ելի-
նելու առաջին տեղը
զիջել այժմ Նլու-
Յորքում կառուցվող



Վիթխարի ժամացուցին: Ահավասիկ մի
հատված «Կրասնայա գաղետա»-ի լեռե-
կուան համարից:


ՀՍԿԱՅԱԿԱՆ ԺԱՄԱՑՈՒՅՑ

Նյու-Յորքի նավահանգստում ավարտ-
վում է յերկու ցիֆերբլատանի հսկայա-
կան ժամացուցի տեղակայումը, վարի
ցիֆերբլատներից մեկը դեպի ծովն է
նայելու, իսկ մյուսը՝ դեպի հաղաքը:
Յուրաքանչյուրջիֆերբլատի շրամագիծը
12 մետր է, յուրաքանչյուր բիւնեանի
բարձրությունը՝ 2 մետր, մեծ ռապեյասր-
լամեների յերկարությունը՝ 5 մետր, իսկ
ժամապահներինը՝ 4 մետր:

Այս ներք լուսավորվելու յեն լուսար-
ձուի հզոր լապտերներով: Հեռադիտակով
ծավից 2 մղոնի վրա, այսինքն 14 կիլոմետ-
րի վրա, կարելի յե ժամացուցը տեսնել:

ԳՐՊԱՆԻ ԺԱՄԱՑՈՒՅՑԻ ՃՈՃԱՆԱԿԸ

Աբհեստական մարդիկ՝ Ստրասբուրգի
մայր յիկեղեցու ժամացուցը՝ Մեծ Բենը,
այս բոլորը, իհարկե, ժամագործության




հրաշքներն են։ Բայց գրպանի ամենա-
սովորական ժամացուցը—միթե զարմա-
նալի բան չե այս։ Պետրոս Հենլեյնի ո-
րից գըպանի ժամացուցը վոչ միայն ար-
տաքուստ, այլև ներքուստ ել խիստ
փոխվել ե։

Յեթե հիշում եք, Նյուրնբերգի ձվերի
մեջ ժամացուցի ընթացքն այնպիսի պը-
տուտան ճոճանով եր կանոնավորվում,
վորը հին ժամանակները դրվում եր նաև
ծանրակավոր ժամացուցի մեջ։ Բայց
հենց նույն չյուգենսն ել, վոր պատի ժա-
մացուցի հինավուրց պտուտանը ճոճա-
նակի լե փոխել, նա յել գըպանի ժամա-
ցուցի համար ուղղորդակ ե հնարել։

Թե ինչի՞ համար ե ուղղորդակը, դուք
հավանորեն չեք մոռացել։ Ուղղորդակը
բանող անվակի պտուտը կասեցնում ե՝
զսպանակին թույլ չտալով, վոր շատ ա-
րագ քանդվի։ Ժամացուցը կանոնավոր
աշխատելու համար անհրաժեշտ ե, վոր-
այդ կասեցնումները միահավասար ժամա-
նակում տեղի ունենան։ այս նպատա-

կով ել պատի ժամացուցը ճոճանակ ունի, վորի լուրաքանչյուր ճոճը միշտ միաշափ ժամանակ ե տեսում, և լուրաքանչյուր ճոճի հետ բանող անիվը մի առան առաջ ե շարժվում:

Բայց թվում ե թե զրպանի ժամացուցին ճոճանակ հարմարեցնել չի լինի: Զե՞ վոր զրպանի ժամացուցը պառկած ել



ե բանում, կանգնած ել, դիսիվալը դրած ել:

Բայց և այնպես Հյուգենսին հաջողվում ե զրպանի ժամացուցի համար ել ճոճանակ հնարել:

Գրպանի ժամացուցի «Ճոճանակը» կան, ավելի ճիշտ, ճոճանը թափանվակն ե, վորի առանցքին ամրացված ե պողպատե պարուրաձև զսպանակի — մազիկի ծալը: Մազիկի մրու ծալըն անշարժ կերպով ամրացված ե ժամացուցի թիթեղին

Յեթե թափանվակն աջ կամ ձախ դարձնելու լինենք ու բայց թողնենք, կը կըսի յետ ու առաջ պտտվել, իր ճոճումնարով ճոճանակի տպավորություն թողնելով: Այստեղ ամբողջ բանը զսպանակի այն հատկությունն ե, վոր մենք արդեն պիտենք — կամակորությունը, կամ, ըստ դիտնականի, առաձգականությունը:

Անվակը պտտեցնելիս մենք զսպանակը կծկեցինք, կամակորությունն այն սկըսում ե քանդվել, հենց վոր ազատություն ենք տալիս: Յեթե անվակը չլիներ, զսպանակը կքանդվեր, պըծալ գընաց: Բայց անվակն ու ծանր վագոնիկը մեկեն չես կամեկ են: քշեցիր թե չե՛ մեկեն չես կա-



ըող կանգնեցնելու Մանը անվակը զսպանակին ստիպում ե


շատ ուժեղ կերպով քանդվելը Զսպանակն ստիպված ե լինում նորից կծկը զեր Յեվ այսպես նորից ու նորից:

Յեթե խանգարող բան չլինի, մեր ճռանը հավիտյան կճռմվի: Բայց առանցքի ու դիմիարների շփումն ու ոդի դիմադրությունը ճռանակն շուտով կկանգնեցնեն, յեթե չլինի ժամացուցիչ մեխանիզմը ինչպես և պատի ճռանակավոր ժամացուցիչ մեջ լարանվակը ճռանը մի դլուխ հրում ե և ոդնում ճռելուն: Իսկ ճռանը ճռելով՝ անվակի պտույտը հավասարաչափ ե դարձնում:

Պատի ժամացուցիչ ճռանակի ու դըրպանի ժամացուցիչ ճռանի նմանությունը այն չե միայն, վոր նրանք մի նապատակի լին ծառայում:

Գիտնականները պարզել են, վոր պա-




րուկը ճռելն ել, ճռանակի ճռելու պես միշտ միահավասար ժամանակ ե տեղվում. յերբեք չի պատահում, վոր մի ճռ-



ճը, որինակը ^{1/5} վալրկյան տեի, իսկ մկուսըն՝ ավելի կամ պակաս: Պարուզի հենց այս գնահատելի հատկությունն ել չլու-


գենսին դրդել ե ճոճանը պարուցի
փոխել:

Գուցե դուք հարցնեք, թե՛ հապա ի՞նչ-
պես ե լարանվակը ճոճանակին ստիպում



ճոճվել, կամ, ընդհակառակն, ի՞նչպես ե
ճոճանը կասեցնում լարանվակը։ Այս բա-
նի համար զանազան միջոցներ կան։ Վո-
րոշ ժամացուցի—«անկերի»— մեջ այդ
միջոցը խարիսխն ե, կամ անկերը՝ պա-

տի ժամացուցի մեջ յեղածի պես մի բան։
Ճոճանի լուրաքանչյուր տատանումից նը-
րա հետ միացած անկերը մեկ այս ատա-
մով ե կասեցնում լարանվակը, մեկ՝ այն։
Իսկ լարանվակն իր հերթին յետ ե մը-
ղում անկերը և ստիպում ե ճոճել, վորի
հետ միասին՝ նաև ճոճանը։



Բայց ժամացուցներից շատերի մեջ
լարանվակն այլ կերպ ե կապված ճոճա-
նի հետ։ Ճոճանի գլանը խողովակաձև ե
պատրաստված, մեջը փորված ե և ուղ-
դակի դրված ե լարանվակի ճանապարհի
վրա։ Յենթադրենք, թե այս բոլելիս ա-
տամը մոտեցավ գլանին ու ծալրով խը-

փեց նրա պատին (նկ. 1): Կաց: Կանգնեց: Առաջ ստիպված ե սպասել, մինչև վոր գլանը փորած կողմը դեպի այն դարձնի և ճանապարհ տա առաջ գնալու: Անցնելով գլանի ներսը՝ ատամը սեղմում ե փորվածքի լեզը և մազիկին ոգնում՝ գլանը դեպի աջ պտտելու (նկ. 2): Նորից կանգնեց, և նորից ե ստիպված սպասելու, մինչև վոր վերադառնալիս գլանին ստիպի դեպի ձախ թեքվելու և ատամին ճանապարհ տալու: Դուրս գալիս ատամը նորից ե սեղմում փորվածքի լեզըն ու հրում գլանը՝ մազիկին ոգնելով, վոր գլանը դեպի ձախ պտտեցնի: (նկ. 4): Յեվ այսպես— մինչև վոր ժամացուցը կանգնի: Գլանը «ցիլինդր» ե կոչվում, ուստի և այսպիսի գլան ունեցող ժամացուցը կոչվում ե՝ «ցիլինդրավոր»: Վերջինս անկեր ժամացուցից եժան ե, բայց վատ ե. ատամները գլանին քսվելուց կամաց կանաց լետ են մնում, մանավանդ լեթե լավ լուղած չե:

ԺԱՄԱՑՈՒՅՑՆ ՈՒ ՏՐՈԿՏՈՒՅ

Ամեն մի մարդ, ով ժամացուց ունի, չպետք ե մոռանա, վոր ժամացուց ասածկ մի մեքենայն, և վոր ժամացուցի տերը լավ և գործունյա մեքենավար պետք ե լինի: Մեքենաների մեջ ժամացուցն ամենափոքր, դյուրաբեկ ու թուլլանն ե: Յեթե վերցնելու լինենք լերեք հարուր միլիոն հատ գրպանի ժամացուց և հաշվելու լինենք նրանց ընդհանուր կարողությունը, կտեսնենք, վոր վերջինս ընդամենը մեկ ձիու ուժի լի հավասար: Ուրեմն, լեթե ժամացուցն այսքան թուլլ ու դյուրաբեկ մեքենա լի, առանձնապես զգույշ պետք ե բանեցնենք:

Ամեն մարդ ել հասկանում ե, վոր լեթե տրակտորը վերցնենք ու շատ բարձրից գետին գցենք, ջարդ ու փշուր, կլինի: Ամեն մարդ ել հասկանում ե, վոր տրակտորը պետք ե մաքրվի ու լուղվի, և վոր համար թիւ բարձր ժամացուցը գնալու համար կանուն է:

պետք եւ լցվի, թե չե տրակտորը չի
բանի:

Իսկ ժամացույցը վայր ել են գցում,
տարիներով մաքրել ել չեն տալիս, մո-
ռանում են ժամանակին լարել, հետո յել
դեռ զարմանում են, թե ուղիղ չի բանում:

Տրակտորավարը տրակտորը խնամելու
կանոնները հաստատ գիտե: Նույն կա-
նոնները չպետք եւ մոռանանաև «ժամա-
ցույցի մեքենավարը»—նա, ով ժամա-
ցույց ունի:

Տրակտորի մոտորը ժամանակին պետք
եւ վառելանցութ—նավթ ստանա: Ժամա-
ցույցի մոտորին—«զսպանակին»—նավթ
պետք չի: Այս մոտորն աշխատում ե, վո-
րովինետև լարում են: Ուրեմն ժամանա-
կին պետք եւ լարել, վոր զսպանակը շատ
շմուլանա և շարունակ բավականաշափ
ուժեղ կերպով ձգված լինի:

Ա.Ռ.Ա.ԶԻՆ ԿԱՆՈՆ

Ժամացույցն որական մի անգամ լարել
միշտ միկնույն ժամանակ:

Մեղնում տրակտորը միշտ միկնույն
դիրքով եւ բանում: Վոչ վոք ել չի պահանջի,
վոր տրակտորը կողքի վրա պառկած բանի:
Ժամացույցն ել միշտ միկնույն դիրքով
պետք եւ բանի—կամ պառկած, կամ կանգ-
նած, թե չե՝ ուղիղ չի բանի:

ՅԵՐԿՐՈՐԴ ԿԱՆՈՆ

Ցեթե դուք ժամացույցը գրպանում եք
պահում, ուրեմն գիշերն ել ուղղահայց
վիճակում պետք է լինի—սեղանի վրա մի
դնեք, այլ մեխից կախեք:

Տրակտորի շենքը—Գարաժը—մաքուր
պետք եւ պահել: Գրպանի ժամացույցի
գարաժն ել գրպանն ե:

ՅԵՐՐՈՐԴ ԿԱՆՈՆ

Ժամացույց դնելու գրպանը շուտ-շուտ
պետք եւ շուտ տալ ու մաքրել:

Տրակտորը պետք եւ յուղել, մաքրել ու
նորոգել: Նույնը պետք եւ անել նաև ժա-
մացույցի նկատմամբ, ուստի և ժամանակ

առ ժամանակ ժամացույցը պետք ե տանել ժամագործի մոտ:

ԶՈՐՈՐԴԻ ԿԱՆՈՆ

ժամացույցը, զո՞նե առնվազն յերկու տարին մի անգամ, մաքրելու պետք ե տալ իսկ թե՛կ ժամացույցը՝ տարեկան մի անգամ (վերջինս շուտ ե աղտոտվում):

Ամեն մի արակտորավար գիտի, վոր արշակուրը ջրից պետք ե պահպի, վորպեսդի չժանգոտի:

Ժամացույցը նույնապես պետք ե խոնավությունից պահպի: Ժամացույցի համար մի քանի կաթիլ ջուրը միենույնն ե, թե արակտորի համար՝ ջրհեղեղը: Պատահում ե, վար մարդիկ ժամացույցը բացում ու մեխանիզմը փշում են, վորպեսդի փոշին փշած լինեն: Այդպես չի կարելի անել: Մեխանիզմի մեջ ոդի հետ ջրի կաթիլներ են ընկնում:

ՀԻՆԳԵՐՈՐԴԻ ԿԱՆՈՆ

Ժամացույցը խոնավությունից պահպանել:

ԺԱՄԱՑՈՒՅՑԻ ՑԵՐԲ ՊԵՏՔ Ե ԼԱՐՎԻ

ժամացույցի լարելը լեզր լավ կլինի առավոտյան, թե յերեկոյան:

Ամենակին ել այդ միենույն բանը չի: Ավելի լավ ե առավոտյան լարել:

Յեկ ահա թե ինչու:

Առավոտյան դուք ժամացույցը լարում եք գրպանը գնելուց առաջ: Իսկ յերեկոյան լարում եք գրպանից հանելուց հետո:

Իսկ այդ միենույն բանը չի: Յեկեք քըննենք: Չեր գրպանում ժամացույցը տաքանում ե: Յեթե դուք քնելուց առաջ ժամացույցը գրպանից հանում ու լարում եք, իսկ հետո գնում սեղանին կամ կախութիս պատին, ժամացույցը ստում ե, զապանակը, վոր առանց այն ել ձգված եր, ավելի յե կուչ գալիս և կարող ե պայթել, մանավանդ յերբ սենյակը ցուրտ ե:

Ուրիշ բան ե, յեթե դուք ժամացույցն առավոտյան եք լարում՝ գրպանը գնելուց առաջ: Յերբ դուք ժամացույցը, գնում եք տաք գրպանը, նրան վոչ մի վաս բան չի

պատահում: Տաքութիւնից զսպանակը լերկարում ե ու թուլանում, վոր և յերկուղալի չի: Հենց այս պատճառով ել ժամացուցն առավոտյան պետք ե լարել և վոչ թե յերեկոյան:

ԾՏԱ.Պ ՈԳՆՈՒԹՅՈՒՆՆ ԴԺԲԱԼԻՏ ԴԵՐՓԵՐԻ ԺԱՄԱԿԱԿԱՆ

Վոչ միայն մարդը, այլև մեքենան ել իր հիվանդություններն ե ունենում: Մեքենայի մոտ դրված բանվորն ստիպված ե աշալուրջ հետեւել մեքենայի առողջությանը — մեքենան տաքություն չունի արդյոք՝ սաստիկ շփումից բարձերը հոչեն տաքանում, խոխոց, սուլոց, անտեղի թխկոց կամ աղմուկ հոչ չկա: Մեծ մասամբ ոգնողը հասարակ գեղն ե — մեքենայի լուղը. բավական ե շփող նասերի արանքը լուղ ածել, վոր ամեն ինչ լուռ ու սահուն գնա, ինչպես լուղի ծորը: Բայց պատահում են նաև ավելի անախորժ հիվանդություններ, յերբ տնական

միջոցները չեն ոգնում: Ստիպված են լինում դիմել մասնագետ բժշկի՝ փականագործական ցեխի վարպետին: Բժիշկը շատ անգամ կարևոր ե գտնում անդամահատություն կապարել, և գործի լեն դրվում վիրաբուժական գործիքները՝ պտուտակի բանալի, հատիչ, մուրճ:


Ժամացուցը հիշանդանականալիս նույնականացնելու պետք ե դիմել մասնագետ բժշկի — ժամացործի: Հիշանդանականացնելու պետք ե հեշտությամբ բուժել:



Յեթե ժամացուցը կանգնում ե, պետք ե տեսնել, թե բոպեասլաքը հոչ չի քըսվում ապակուն, կամ սլաքները հոչ իրար չեն կպել: Յեթե այստեղ բան չկա և անվաս ե, մեխանիզմը բացեք տեսեք, թե վորևէ կեղտ լարանվակին հոչ չի խան-

գարում: Այլ կեզալ թռչնի փետուրով
հեշտութիւնը կարելի լե հետացնել:

Յեթե ժամացուցը լետ ու առաջ և
ընկնում, ցուցիչը — «Բյուկերը», վոր ճա-
ճանի հետ մի առանցքի վրա լե հաղցը-
ված, պետք եւ տեղից շարժել: Բյուկերի
մի կողքին գրված է ֆրանսերեն «avance»
(արագացում) կամ անդիերեն
«fast» (տրագ) բառը: Մյուս կողքին՝
«retard» (գանդաղեցում) կամ (slow)
(գանգաղ): Բյուկերի կարճ ծալքին մի
փոքրիկ բուլի՛ կա, վոր դեմ եւ առնում մա-
զիկին Բյուկերը «retard»-ից «avance»-
յեն մոտեցնելով մենք բուժակն եւ ենք




տեղափոխում: Մազիկի ազատ, վոչ մի
ճնշում չունեցող մասն ավելի լե կար-
ճանում, ուստի և ավելի առաձգական ե
դառնում: Այս պատճառով ճոճանն սկսում

է ավելի հաճախակի ճոճել, և ժամա-
ցուցն արագ եւ բանում: Բյուկերը մի-
այն մի խաղ պետք եւ առաջ տալ: Մի
քանի որից հետո ժամացուցը մի ուղիշ,
ավելի ուղիղ ժամացուցի հետ պետք ե
ստուգել: Յեթե ժամացուցը շարունա-
կում եւ լետ ընկնել Բյուկերը մի խաղ
եւ պետք եւ առաջ տալ: Յերբ ժամա-
ցուցն առաջ եւ ընկնում, Բյուկերը դե-
պի մյուս կողմն են տալիս:

Բյուկերը տեղափոխվելով՝ ժամացուցը
լետ ընկնելուց վերջնականապես չենք
բուժում, այլ միայն հիվանդությունը թե-
թեացնում ենք: Ուշ թե շուտ ժամացուց-
ընորից պետք եւ սկսի լետ ընկնել ու
բոլորովին կկանգնի, լեթե չտանք ժա-
մագործին մաքրելու և լուղելու: Բանն
այն է, վոր «ծալքիկներին» (առանցքների
ծալքերը) քսած լուղն ողից փշանում եւ —
թթվում ու թանձրանում եւ Զապանակն
ստիպված ելինում ավելի ու ավելի շատ
շփում հաղթահարել: Վերջիվերջո զսպա-

նակը դադարում ե իր աշխատանքն առաջ տանելուց ու գործադուլ ե հայտարարում:



Բայց պատահում ե, վոր ավելի վատ ե լինում՝ ժամացույցը կանգնում ե, վորովհետև զսպանակը կտրվում ե: Դուք ինքներդ ել կարող եք ստուգել, թե իսկապես

բանը բուրդ ե: Փորձեցեք սրած լուցկուծայրով շարժել ժամացույցի մեջտեղի անվակը, վոր զսպանակին ամենից մոտ ե: Յեթե անվակը շարժվում ե, ուրեմն զըսպանակը կտրվել ե, և ուզեսչուզես, ժամացույցը վարպետի մոտ պետք ե տանես:

Ժամագործի արհեստանոց—վորքանուժեղ նմանություն ե տալիս հիվանդանոցի պալատին, չիվանդներից վոմանք

զառանցում են՝ տենդագին կերպով իրվելով ժամերը: Մուսաները, ընդհակառակն, յերկար խոխոացնում ու հաղում են, մինչև վոր կցկտուր զարկը դուրս ե թուչում նրանց մրսած կրծքից: Այնպիսիներն ել կան, վոր ուշամափ պառկած են, առանց ծպտուն հանելու:

Փոքրիկ ժամացույցների նուրբ զարկը, պատի մեծ ժամացույցների հստակ զարկերը, խոխոոցն ու տնքոցը—այս բոլորը միախառնվում մի հոծ աղմուկ ե դառնում, վորից անսովոր գլուխն սկսում ե ցավել:

Յեվ այս բոլոր աղմուկ-շփոթի մեջ հանգիստ ու առանց շտապելու իր դժվարին աշխատանքն ե կատարում գլխավոր բըժիշկը—ժամագործը: Յեվ այն ժամացույցը, վոր թվում եր, թե բոլորովին փշացած ե, նրա հմուտ ձեռքից դուրս ե գալիս յերիտասարդացած, առողջ ու զվարթ:

ԺԱՄԱՆԱԿԻ ՓՈԽԱԴՐՈՒԹՅՈՒՆ

100,000 ռուբլի նրան, ով ժամանակը փոխադրելու միջոց գտնի:

Այսպես եր հայտարարել անգլիական պարլամենտը 1714 թ: Յեվ բազմաթիվ մարդիկ միանգամից սկսեցին այդ դժվարին դործը: Ժամանակի փոխադրություն ասածի գինու կամ պղպեղի փոխադրություն չի: Վոչ նավի նկուղում կարող ես պահել, վոչ ել տակառի մեջ խցանել:

Չկարծեք թե այս իրավացի գրքի հեղինակը խելագարվել ե կամ պատրաստվում ե ձեզ հիմարացնելու: Ժամանակի փոխադրությունը վոչ միայն հնարավոր, այլև անհրաժեշտ բան ե:

Բոլորս ել գիտենք, վոր ծովագնացները ծովի մեջ ստիպված են վորոշել տեղի լայնքն ու լերկայնքը, վորպեսզի ճանապարհը չկորցնեն:

Լայնքը բեվեռալին աստղով են վորո-


շում: բևեռալին աստղը վորքան բարձր լինի, նաման այնքան դեպի հյուսիս ե գընացել:

Իսկ լերկայնքը, այսինքն առաջին միջորեյականից անցած տարածությունը, այլ կերպ են վորոշում:

Տարբեր միջորեյականներում ժամանակը տարբեր ե: Յեթե Մոսկվայում արեվը հենց նոր ե ծագել, կոնդոնում դեռևս գիշեր ե, քանի վոր կոնդոնը Մոսկվայց ավելի արևմուտք ե գտնվում: Լերկերը, արևմուտքից դեպի արևելք պտտվելով, դեռ չի կարողացել կոնդոնը գնել արելի ճառագայթների տակ:

Յեթե մի վորենե տեղ ցերեկվա ժամի 12-ն ե, ապա ալդտեղից դեպի արևմուտք՝ 15⁰ տարածության վրա կլինի վոչ թե ժամի 12-ը, այլ 11-ը միայն, 30⁰ տարածության վրա կլինի ժամի 10-ը և այլն: Յերկայնության տասնհինգ աստիճանը հայլասար ե ժամանակի մի ժամի:

Դուրս ե գալիս, վոր ճանապարհին տեղի յերկայնությունն իմանալու համար հետը ժամացուց պետք ե վերցնել և հա-



ժեմատել այն տեղական ժամանակի հետ Յեթե տեղական ժամացուցի հետ համեմատած՝ ձեր ժամացուցը յերկու ժամ առաջ ե ընկել, ուրեմն դուք 30° արեալուտք եք գնացել:

Բաց ծովում, ուր վոչ վոք չկա, վոր հարցընես, թե ժամի քանիսն ե, ժամացուցըն արևով կամ աստղերով են ստուգու:

Պարզ կերպով, ճիշտ ե, չե՞ս կարծես թե հեշտ ե, հետներդ ժամացուց ունեք, բավական ե: Հապա մրցանակ տալու նրապատակն ել ինչ եր:

Պարզ ե, բայց վոչ բոլորովին: Ժամացուցը ինչպես գիտենք, քմանաճ մեքենա լե, յնցումներ չե սիրում և նավի վրա անխուսափելիորեն հիվանդանում ե ծովալին հիվանդությամբ—լետ ե ընկնում, առաջ ե վազում, այնպես վոր ժամացուցին վրատահել ալլես չի կարելի: Զե՞ս վոր լեթե


ժամացուցը մի ըոպե լետ ընկնի, յերկայնքը վորոշելու սխալը կլինի $\frac{1}{4}^{\circ}$, իսկ այս շատ շատ ե: Այսպիսով կարելի լինանապարհն ել կորցնել, խութերի լիւ գարկիվել:

Այդ պատճառով եք ծովի վրա հետները վոչ թե հասարակ, այլ առանձնապես



ճիշտ ժամացուց—քրոնոմետր (ժամանակաչափ) են վերցնում:

Ամբողջ աշխարհի ժամագործները հարուցուք տարուց ավելի չարչարվեցին քրոնոմետր հնարելու վրա, մինչև վոր վեր-



ջապես այդ բանը հաջողվեց անդլիացի Հարրիսոնին և ֆրանսիացի Լեռուալին:

Հարրիսոնի քրոնոմետրն ազնվորեն դժմացավ «Dertford» նավի վրա Պորտսմուտից Յամակա լողալիս: Իսկ դրանից հե-

ուր ծով գուրս լեկավ Փրանսիական «Ավրորա» ֆրեգատը (առաջաստավոր մարտանավ)՝ ել ավելի լավ քրոնոմետրով, վոր Լեռուալի ձեռքի գործն եր: 46 որ ճանապարհորդելու ընթացքում այդ քրոնոմետրը միայն 7 վայրկյան լետ ընկավ:

Հարրիսոնը խոստացված մրցանակի միայն մի մասն ստացավ, այն ել լեզկար չարչարվելուց հետո:


ԳԱՐՉՅԱԼ ՅԵՐԿՆԱՑԻՆ ԺԱՄԱՑՈՒՅՑԻ ՄԱՍԻՆ

Զկա այնպիսի մի ժամացուց, վոր առանց յետ կամ առաջ ընկնելու բանի:

Յեղանակի փոփոխությունը, շոգն ու ցուրտը, խոնավությունը, պատահական ցնցումը կամ դիրքի փոփոխությունը, լուղի թանձրացումը—այս բոլորը դանդաղորեն, բայց ճշտությամբ խանդարուն են նույնիսկ ամենաճիշտ քրոնոմետրի ընթացքը: Որինակ՝ խոնավությունը հա-

վաքվելով ճոճանի վրա՝ այն ծանրաց-
նում ե, և այս պատճառով ել ճոճանն
սկսում ե դանդաղ ճոճվել, և ժամացույ-
ցը լետ ե ընկնում:

Բարեխառնության բարձրանալը քրո-
նոմետրի վրա նույնպես զգալի կերպով ե
անդրադառնում, ինչպես և ջերմաչափի
վրա. տաքանալուց պարուղը լայնանում,
լերկարում ու թուլանում ե: Այս բանը



նույնպես զան-
դաղեցնում և
քրոնոմետրի
բանելը:

Աստղադի-
տարաններում,
վորտեղ ճիշտ

ժամացույցներ կան, վորոնցով ժամա-
նակն ստուգում են ամբողջ քաղաքներ և
նույնիսկ լեռկըներ, ժամացույցի մասին
հոգ են տանում այնպես, ինչպես ծանր
հիվանդի մասին:

Ուշադիր ինամք, կատարյալ հանդիսա-


մի խոսքով՝ վոչ թե աստղադիտարան, այլ
սանատորիա: Ճիշտ ե՝ արդպիսի սանատո-
րիան մարդուն գերեզման կտաներ:

Պուլկովում, որինակ, ժամացույցը նը-
կուղում և դրված՝ բարեխառնության
խիստ փոփոխություններից պաշտպանե-
լու համար: Նկուղը մտնում են միայն լա-
րելու համար, վորովինետեւ նույնիսկ մար-
դու մարմնի մոտենալուց ժամացույցի ըն-
թացքը կարող ե փոխվել:

Պուլկովի աստղադիտարանի ժամացույ-
ցը հեռագրալարով կապված ե Պետրո-
պավլովսկի բերդի հետ: Ցերեկվա ժամի
12-ին բերդի ամբություններից լսվում
է թնդանոթի կրակոցը, և լենինգրադ-
ցիները մի բոպե գործն ընդհատում են,
ժամացույցը հանում և թնդանոթի հետ
ստուգում են:

Բայց այդ բանը շատ անհարմար կլի-
ներ, իմթե լենինգրադցիները կարողա-
նացին ժամանակն ստուգել միայն թնդա-
նոթով, ժամի 12-ին: Լենինգրադում ժա-
մանակը կարելի լե ստուգել նաև հան-

բային գրադարանի ժամացուցով, վոր
նուկնպես կազմած ե Պուլկովի հետո Ա-
վելի ստույգ ժամացուց կա նաև չափ ու



կշիռների գլխավոր պալատի աշտարակին,
ինչպես և գլխավոր շտաբի կամարի գըլ-
խի ելեքտրական ժամացուցը, վոր կազ-
մած ե վերոհիշյալ ժամացուցի հետո

Հիմա ճիշտ ժամանակի ազդանշաննե-
րը ուղիղորդ ել են հաղորդվում: Առաջինը
ֆրանսիացիք սկսեցին ժամանակը ու

գիոյնվ հաղորդել՝ Փարիզի Ելֆելիսն աշ-
տարակից: Այնուհետև նաև մըուս ուս-
դիոկայանները՝ ամբողջ աշխարհինը: Մեզ-
նում ժամանակի ազդանշաններ Դետուկո-
յի սեղլի և Մոսկվայի ուաղիոկայաններն
են՝ հաղորդում: Բաղիուազդանշանները
տարածվում են ամեն կողմ, ցանաքի ու
ովկիանոսի վրա, քաղաքացիներին իրենց
աներում ու ծովագնացներին նավեզրի
վրա հաղորդելով, թե ժամի քանիան եւ:
Բայց կարող ենք արդյոք հավատալ,
վոր ամենաճիշտ ժամացուցը լեբեք չէ
խարում: Իհարկե վոչ: Զե՞ վոր մենք գի-
տենք, վոր բոլոր ժամացուցներն ել խա-
րում են—մեկը՝ շատ, մյուսը՝ քիչ:


Յեվ նորից ստիպված ենք ոգնութեան
ու ցուցմունքի համար գիմել այն ժա-
մացուցին, վոր հլու հնազանդ ծառալում
եր մարդկանց գեռ այն ժամանակ, յերբ
վոչ պատի ժամացուց կար, վոչ զրապա-
նի, վոչ ել աշտարակի: Յերկնալին ժա-

մացուցը. — ահավասիկ միակ քրոնոմետրը, վորը լեռբեք չի խարում:

Յերիրադունդն իր առանցքի շուրջու միշտ միննույն ժամանակ և պտտվում: Աստղերն իրենց տեսանելի շարժումով միշտ միննույն ժամանակ են լեռկնակամարի վրայով վերադառնում իրենց տեղը. Ինց աստղերով ել միայն կարելի յե ստուգեր ժամացուցը:

Հենց այդ պատճառով ել ճիշտ ժամացուց եղավում աստղադիտարաններում: Ճիշտ ե՞ւ աստղաբաշխների հաշվով լեռկրադնդի պտույտն իր առանցքի շուրջն սկսում ե կամաց-կամաց դանդաղել: Ուրեմն ավելի ու ավելի յեն լեռկարում: Բայց միլիոնավոր տարիներ են հարկավոր, վոր մենք կարողանանք այդ բանը նկատել: մենք առաջիւ պես կարող ենք համարել, թե լեռկնային ժամացուցը միակ և ուղիղ ժամացուցն եւ: Առաջիւ պես, ինչպես և շատ հին-հին ժամանակ-

ները, աստղերի ժամացուցի լորի ընթացքը մեզ չի խարում:



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍԻ

	ԵՎ
Ի՞նչ կլիներ, յեթե ժամացույց չլիներ	3
Անտիկվարի խանութ	7
Մի կուսակրոնի պատմություն	10
Յերկնքի ժամացույցը	13
Մարդիկ քայլերով ինչպես են չափել ժամանակը	17
Հնգիկ ֆակիրի ֆոկուսը	19
Ճիֆերբատով, բայց անոլաք ժամացույց	23
Իվան Իվանովիչի ու Իվան Պետրովիչի զբույցը	30
Լաթի ժամացույց	34
Ժամացույցն ու Միքստուրը	39
Մեծ ժամ և փոքր ժամ	43
Կենդանի զարթուցիչը	47
Մարկոսի և Յուլիոսի պատմությունը	50
Ալեքսանդրիայի ժամագործները	55
«Հաղար ու մեկ գիշերի» ժամացույցը	56
Կրակե ժամացույց և կրակե զարթուցիչ	71



Խոշակիրների արշավը (կողոպուտ)	79
Ժամացույցն ու ջրհորը	85
Մի քանի խոսք ել նապաստակների մասին	89
Մեծ Տոմի կատակը	95
Նույրնբերգի ձվերն ու իրենցից դուրս լեկածը	98
Հերցոգն ու գրանահատը	115
Ժակեմարն ու իր կինը	119
Յերկու մանուկ	125
Խոչի մասին եր ասում ճոճանակը	134
Նախնադարյան ճարտարապետները	140
Արհեստական մարդիկ	148
Պարասբուրդի մայր յեկեղեցու հրաշքները	158
Բիգ-Բեն	166
Իրանի ժամացույցի ճոճանակը	170
Ժամացույցն ու տրակտորը	181
Ժամացույցը յԵրբ պետք ել լարվի	185
Շտապ ոգնություն դժբաղդ դեսպերի ժամանակ	186
Ժամանակի փոխողություն	192
Դարձյալ յիրկնային ժամացույցի մասին	197

Фигура 1а.

16258



М. ИЛЬИН
КОТОРЫЙ
ЧАС?



XII

